



«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

2004թ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ, ՀԱՃԱՆՈՐԳՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

2004թ. դեկտեմբերի 23-ին լրացավ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ տասնամյակը: Անցած տասը տարիները եզրափակվեցին ակնառու արդյունքներով և հաջողություններով: Ստեղծման օրվանից ի վեր, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերածվել է ժամանակակից, ունիվերսալ, անընդհատ աճող, կայուն և մրցունակ ֆինանսական համակարգի, հետագա աճի և զարգացման էական ներուժով: Իր գործունեության ընթացքում Բանկն անընդհատ և հետևողականորեն կատարելագործել է աշխատանքի կազմակերպման մոդելը, կառավարման համակարգը, հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները, ընդլայնել է բանկային ծառայությունների փաթեթը, ձևավորել հմուտ և մասնագիտացված աշխատակազմ: Կատարված աշխատանքների արդյունք հանդիսացան «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻ» 2004թ. հաջողությունները, 2003թ. թռիչքային արդյունքներից հետո շարունակական, կայուն աճի բարձր տեմպերը: 2004թ. Բանկը վերահաստատեց իր առաջատար դիրքերը, ամրապնդեց հեղինակությունը Հայաստանի և նրանից դուրս գործարար ու ֆինանսական շրջանակներում:

Վերջին տարիների ՀՀ բանկային համակարգի զարգացումները, ՀՀ շարունակական տնտեսական աճը, բանկային սպասարկման ծառայությունների նկատմամբ շարունակական աճող պահանջարկը, բանկերի համար հաճախորդների զանգվածի ընդլայնումը և վերջիններիս բանկային սպասարկման որակական պահանջներն ընդգծեցին ՀՀ բանկերի միջև մրցակցային պայքարի շարունակումը որակի նոր հարթակում: Եթե 2003թ., ինչպես և 2004թ. բանկերի գործունեության հաջողության միանշանակ նախապայման դարձան հաճախորդների սպասարկման որակի բարձրացման, ծառայությունների շրջանակի ընդլայնման, աշխարհագրական ընդլայնման, կառավարման համակարգի կատարելագործման և խելամիտ ռիսկային դաշտի ընտրության ապահովումը, ապա 2004թ. արդիական դարձավ նաև բանկերի ռեսուրսային բազաների մեծացումը, էժանացումը և «երկար» փողերին տիրապետելը՝ ՀՀ տնտեսական զարգացմանը և բնակչության ու տնտեսվարող սուբյեկտների առաջ եկող նոր պահանջներին զուգահեռ:

2004թ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ համար, որը հանրապետության խոշոր առևտրային բանկային ինստիտուտներից մեկն է և իր պրակտիկայի ընթացքում հաստատել է իր կայունությունն ու յուրահատկությունը, դարձավ 10-ամյա նվաճումների ամրապնդման օրինաչափ փուլ: 2004թ. Բանկի գործունեության տրամաբանական գնահատականներն էին «FINANCIAL TIMES» կազմակերպության «THE BANKER» ամսագրի կողմից Անգլիայում կազմակերպվող ամենամյա «ՏԱՐՎԱ ԲԱՆԿ» մրցանակաբաշխությանը «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին Հայաստանի 2004թ. լավագույն բանկ ճանաչելը՝ շնորհիվեց **«ՏԱՐՎԱ ԲԱՆԿ»** տիտղոսը և «THE BANKER» ամսագրի հիմնադիր Բրենդեն Բրեքենի անվան հանրահայտ «BRACKEN» մրցանակը, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներքին պետական պարտքերի կառավարման գծով **Կառավարության լավագույն գործակալ** ճանաչելը:

Գնահատելով 2004թ. գործունեության արդյունքները, անցած տարին Բանկի համար կարելի է արձանագրել որպես 2003թ. թռիչքային փուլին հաջորդող շարունակական վերելքի, շարժման կայունացման և նոր հեռանկարների բացահայտման և զարգացման ժամանակահատված: Տոկոսային ծախսերի 29.9% և տոկոսային եկամուտների (վարկային ներդրումների հաշվին) 18% աճի պարագայում զուտ տոկոսային եկամուտները աճեցին 12.4%-ով կամ 177 մլն դրամով: Ոչ տոկոսային եկամուտների 37.4% , և ոչ տոկոսային ծախսերի 31.6% աճի պարագայում զուտ ոչ տոկոսային եկամուտները աճեցին 114 մլն դրամով կամ 98.6%-ով: Արդյունքում շահույթն առանց զուտ մասհանումների աճեց 18.8%-ով կամ 291 մլն դրամով և

կազմեց 1 835 մլն դրամ: Հատկանշական է, որ 2004թ. գուտ մասհանումների գծով ստացվել է 244 մլն դրամի եկամուտ՝ 2003թ. 930 մլն դրամի ծախսերի պարագայում և շահույթը՝ ներառյալ գուտ մասհանումները, աճել է 3.38 անգամ և կազմել 2 079 մլն դրամ:

2003թ. բազային նվաճումները հաշվի առնելով, առաջին հերթին հարկ ենք համարում նշել, որ 2004թ. Բանկի գործունեությունը ուղղված էր տարածաշրջանային ընդլայնման միջոցառումներին, Բանկի կառավարման համակարգի կատարելագործմանը, մի կողմից, հաճախորդների սպասարկման, գործընկերների հետ փոխհարաբերությունների որակի համակարգի շարունակական կատարելագործմանը և ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, մյուս կողմից, ինչը բերեց Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակի (աճել է 45.2%-ով), մատուցված ծառայությունների ծավալի զգալի ավելացմանը, Բանկի աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

2004թ. Բանկի գործունեության հիմնական նորույթ հանդիսացան՝

- *ծառայությունների բնագավառում*՝ բնակչությունից և կազմակերպություններից կոմունալ վճարումների ընդունման համակարգի մշակումը և ներդրումը, երկրորդային շուկայից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով և հիփոթեքային վարկավորման իրականացումը, փոխանցումների «Converse Transfer» համակարգի ստեղծումը, «WESTERN UNION» միջազգային վճարային համակարգին անցումը, հերթերի կառավարման ավտոմատացված համակարգի ներդրումը Բանկի գլխավոր գրասենյակի սպասարկման սրահում,

- *մասնաճյուղային ցանցում*՝ 7 նոր մասնաճյուղերի գործարկումը Երևան քաղաքում և ՀՀ տարածաշրջաններում,

- *կառավարման համակարգում*՝ կառավարման համակարգի տարաբնույթ խնդիրների կարգավորումը, կանոնակարգումը և դրանք ապահովող մոդելների կատարելագործումը և ներդրումը, այդ թվում նոր կառուցվածքային ստորաբաժանումների հիմնադրումը և գործառնությունների օպտիմալ վերաբաշխումը, աշխատատեղերի գնահատման և մասնագիտական որակավորման, վարձատրության գործավարձային, ֆինանսական ռիսկերի կառավարման, տեղեկատվական և այլ ներդրված համակարգերը:

- տեխնոլոգիական զարգացման բնագավառում՝ Բանկի գլխամասի և մասնաճյուղերի միջև online կապի կիրառումը, բանկային ավտոմատացված սպասարկման համակարգի «մեկ սերվերի» տեխնոլոգիային անցումը, տեխնիկական և համակարգչային պարկի նորացումը:

2004թ. ընթացք ստացավ գլխամասային գրասենյակի նոր մասնաշենքի (ներառյալ դեպոզիտարիայի, դրամապահոցի և արխիվի կառույցների) կապիտալ շինարարության գործընթացը, որը կավարտվի 2005թ.:

Էական դրական արդյունքների հետ մեկտեղ 2004թ. ազդանշանային էր Բանկի համար նոր յուրացվող ուղղությունների նկատմամբ պահպանողական մոտեցումների կիրառման անհրաժեշտության տեսակետից: Այսպես, ռիսկերի նվազեցման նպատակով դանդաղեցվեցին ֆակտորինգային գործառնությունների ուղղության զարգացումները, զսպված էր հիփոթեքային վարկավորման ուղղությունը:

ՀՀ բանկային շուկայի ներկայիս վիճակը և տենդենցները բնութագրվում են կայուն, բայց հեռանկարում սահմանափակ աճի տեմպերով՝ պայմանավորված ռեսուրսների թանկության, կարճաժամկետ լինելու հանգամանքներով, բանկերի կողմից շուկայի առանձին մասնաբաժինների համար ագրեսիվ վարվող քաղաքականությամբ, նախկինում ռիսկային դիտվող նոր շուկաների բացահայտման և յուրացման խնդիրներով: Արտաքին ռեսուրսներին տիրապետող ՀՀ բանկերը, այդ թվում նոր մասնակիցները մրցակցային լուրջ հայտ են ներկայացնում և Բանկը, ռազմավարության տեսակետից կփորձի դիմակայել մրցակցությանը շուկաներում մասնաբաժինների շարունակական մեծացման, հաճախորդների հետ երկարաժամկետ համագործակցության, սպասարկման հարմարավետության, հաճախորդների նոր զանգվածների բացահայտման և ինտենսիվ ներգրավման մոտեցումներով:

Այս պարագայում, Բանկի ընդհանուր ռազմավարության գլխավոր նպատակն է Բանկի դիրքերի հետագա ամրապնդումը ներկայիս մակարդակում որպես առաջատար ունիվերսալ առևտրային բանկ՝ ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքերի պահպանմամբ, միաժամանակ ապահովելով հետագա զարգացման, ընդլայնման անհրաժեշտ նախապայմանները: Տիրապետելով նվազ ծախսատար ռեսուրսային բազայի, մարքեթինգային ստրատեգիայի տեսակետից Բանկը կգործի՝ հիմնվելով Բանկի ստրատեգիական առավելությունների և շուկայի տարողության համադրության հիման վրա, միաժամանակ հաշվի առնելով իրացման շուկաների զարգացման բնույթը, ռիսկերը և դրանց հարաբերակցությունը:

Ռազմավարության գլխավոր նպատակի ապահովման հիմնական խնդիր կհանդիսանան.

- հաճախորդների կայուն աճող բազայի ապահովումը, փորձելով ծածկել բանկային սպառման նոր բնագավառներ, սպառողների նոր սեգմենտներ, զանգվածներ,
- բանկային հիմնական՝ վարկային, արժութային, տոկոսային ռիսկերի ցածր մակարդակի ապահովումը,
- ծառայությունների շրջանակի հետագա ընդլայնումը, սպասարկման որակի բարձրացումը,
- տեխնոլոգիական զարգացումը:

Խնդիրների լուծման նպատակով գլխավոր միջոցառումներ կհանդիսանան.

- Բանկի մասնաճյուղային ցանցի հետագա ընդլայնումը,
- հաճախորդների բազայի աճի և կայունացման (երկարաժամկետ համագործակցության պայմանների) ապահովմանն ուղղված միջոցառումները, նոր ծառայությունների ներդրումը, ռեսուրսային բազայի ընդլայնումը,
- վարկային ռիսկի դիվերսիֆիկացման շարունակումը՝ ցածր ռիսկային, նպատակային ստանդարտացված վարկային տեխնոլոգիաների ընդլայնումը, այդ թվում՝ գործող (փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված վարկավորում, սպառողական վարկեր) և նոր ուղղություններով (սպառողական վարկավորման նոր ուղղություններ, այդ թվում հիփոթեքային վարկավորում):
- կառավարման համակարգի հետագա կատարելագործումը՝ ուղղված անձնակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ներքին հսկողական համակարգի կատարելագործմանը, գործառնական ռիսկերի նվազեցմանը,
- Բանկի գլխամասի և մասնաճյուղերի միջև online կապի կիրառման գործընթացի ավարտը, բանկային ավտոմատացված սպասարկման համակարգի մեկ սերվերի տեխնոլոգիային ամբողջական անցումը,
- բանկային ավտոմատացված սպասարկման ծրագրային համակարգի արդիականացումը:

Անշուշտ, Բանկի նվաճումները և ծրագրված անելիքները հնարավոր իրականություն չէին դառնա առանց Բանկի նկատմամբ մեր հաճախորդների վստահության և, միաժամանակ, Բանկի անձնակազմի անձնուրաց, արհեստավարժ և ստեղծագործական աշխատանքի:

Բանկի Վարչության անունից հայտնում ենք մեր խորին գոհունակությունը և շնորհակալությունը Բանկի հաճախորդներին, գործընկերներին, բաժնետերերին ու անձնակազմին արդյունավետ համագործակցության և աշխատանքի համար:

Հարգանքով՝

*Կոնվերս Բանկ ՓԲԸ
գլխավոր տնօրեն
Ս.Նասիբյան*

ԲԱՆԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն ստեղծվել է 1994թ. դեկտեմբերին, հանդիսանում է «ՀՅՈՒՄԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ» բանկի իրավահաջորդը և բանկային գործառնություններ իրականացնելու համար ունի ՀՀ ԿԲ կողմից տրված N57 բանկային արտոնագիրը:

Ներկայումս Բանկի կանոնադրական կապիտալի հիմնական մասը՝ 85% ոչ ռեզիդենտ բաժնետերերի փայաճանակցությունն է: Բանկի բաժնետերերն են՝

Բաժնետերերի (փայտերերի) լրիվ անվանումը	Սեփականության ձևը	Բաժնետոմսի տեսակը	Ուեզիդենտ (ոչ ռեզիդենտ)	Մասնակցության չափը կանոնադրական կապիտալում	
				Գումար (հազ.դրամ)	%
"HUDSOTRADE LTD", դեկավար՝ Եմադ Մտանյուս Խուրի	ոչ պետական	Սովորական	ոչ ռեզիդենտ	600,700	48.7%
Սմբատ Անուշավանի Նասիբյան	ֆիզիկական անձ	Սովորական	ռեզիդենտ	185,000	15.0%
Սողալալ Մտանյուս Խուրի	ֆիզիկական անձ	Արտոնյալ	ոչ ռեզիդենտ	33	0.0%
Սողալալ Մտանյուս Խուրի	ֆիզիկական անձ	Սովորական	ոչ ռեզիդենտ	447,400	36.3%
Սողալալ Մտանյուս Խուրի	ֆիզիկական անձ	Սովորական-Եմիսիոն եկամուտ	ոչ ռեզիդենտ	63,233	x
<i>Ընդամենը կանոնադրական կապիտալ</i>				1,296,366	100.0%

Բանկի զարգացման հիմնական փուլերն են՝

- 1993թ. - Հիմնադրվել է որպես «Հյուսիս - հայկական» փայտիրական բանկ:
- 1993թ. - Արտոնագրվել է "Կոնվերս բանկ " ՓԲԸ ":
- 1994թ. - Վերանվանվել է որպես "Կոնվերս բանկ " փայտիրական բանկ:
- 1995թ. - Գրանցվել է Երեվանի ֆոնդային բորսայում:
- 1995թ. - Լիցենզավորվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արժեթղթերի շուկայում՝ որպես ներդրումային հիմնադրամների պահառու:
- 1996թ. - Արտոնագրվել է որպես ՀՀ ԿԲ հիմնական և պաշտոնական դիլեր՝ գանձապետական պարտատոմսերով գործառնություններ կատարելու համար:
- 1997թ. - Վերակազմավորվել է "Կոնվերս բանկ" Փակ Բաժնետիրական Ընկերության:
- 1997թ. - Լիցենզավորվել է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ թիվ 57 ընդհանուր արտոնագրով:
- 1997թ. - Դարձել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վճարային գործակալ:
- 1997թ. - Դարձել է Երևանի Ֆոնդային Բորսայի բաժնետեր:
- 1997թ. - Հավատարմագրված է Համաշխարային բանկի կողմից Հայաստանում Փոքր և Միջին Բիզնեսի Զարգացման Ծրագրի ֆինանսավորման շրջանակներում:
- 1997թ. - Անդամակցել է SWIFT համակարգին:
- 1998թ. - Դարձել է "Արցախ բանկ" ԲԲԸ բաժնետեր:
- 1998թ. - Գրանցվել է "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Կենտրոնական" մասնաճյուղը :
- 1999թ. - Հանդիսանում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ԿԲ պաշտոնական գործակալ՝ ՀՀ պետական /գանձապետական/ կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում գործառնություններ կատարելու համար:

- 1999թ. - Հավատարմագրվել է "ԼԻՆՍԻ" հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրի վարկավորման շրջանակներում:
- 2000թ. - Հավատարմագրված է Համաշխարային բանկի կողմից Հայաստանի գյուղատնտեսական բարեփոխումների ծրագրի վարկավորման շրջանակներում:
- 2000թ. - Հավատարմագրվել է ԱՄՆ Գյուղատնտեսական դեպարտամենտի (USDA) կողմից մարքեթինգի աջակցության ծրագրի վարկավորման շրջանակներում:
- 2000թ. - Արտոնագրվել է "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Նոր Հաճրն" մասնաճյուղը:
- 2000թ. - Ստացել է քանկարժեք քարերի առք ու վաճառքի լիցենզիա:
- 2000թ. - Անդամակցություն «Արքա» վճարահաշվարկային համակարգին:
- 2000թ. - Ստեղծվել է "Կոնվերս Ինկասացիա" ՍՊԸ:
- 2001թ.- Դարձել է "Կոնտակտ" փոխանցումների համակարգերի անդամ:
- 2001թ. - Արտոնագրվել են "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Գյումրի" և "Վանաձոր" մասնաճյուղերը:
- 2002թ. - Դարձել է "Սիզոմ" փոխանցումների համակարգի անդամ:
- 2002թ. - Արտոնագրվել են "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Զվարթնոց" և "Ավիացիա" մասնաճյուղերը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում:
- 2002թ. - Հավատարմագրված է "Հայ-գերմանական հիմնադրամի" կողմից Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրի վարկավորման շրջանակներում:
- 2002թ. - Հանրապետության հրապարակում տեղակայված «Կոնվերս բանկի» գլխամասային գրասենյակի նոր կառույցի հանդիսավոր բացում:
- 2002թ. - "Կոնվերս բանկը" դարձել է «VISA INTERNATIONAL» միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ:
- 2003թ. - «Կոնվերս բանկի» և ԱՄՆ Սիջազգային Զարգացման Գործակալության (USAID) միջեվ կնքվեց երկկողմ համաձայնագիր վարկային պորտֆելի երաշխիքի վերաբերյալ:
- 2003թ. - Արտոնագրվել է "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Արտաշատ" մասնաճյուղը :
- 2003թ. - Դարձել է Երևանի Առևտրաարդյունաբերական պալատի անդամ:
- 2003թ. - «Կոնվերս բանկը» ստացել է առևտրային կետերում VISA քարտերի սպասարկման իրավունք (Acquiring Licence),
- 2004թ. - «Կոնվերս բանկը» ներդրեց դրամական փոխանցումների նոր "ԿՈՆՎԵՐՍ ՏՐԱՆՍՖԵՐ" սեփական համակարգը:
- 2004թ. - Դարձել է ՀՀ-ում ԱՄՆ Առևտրային պալատի անդամ:
- 2004թ. - Արտոնագրվել են "Կոնվերս բանկ" ՓԲԸ "Սևան", " Չարենցավան ", " Մեծամոր ", "Արմավիր ", "Հրազդան ", "Ավան" մասնաճյուղերը:
- 2004թ. - "Financial Times" կորպորացիայի կողմից "Կոնվերս բանկ" ՓԲԸ-ին շնորհվել է Հայաստանի "Տարվա բանկ" մրցանակը :
- 2004թ. - "Կոնվերս բանկը" դարձել է Western Union միջազգային փոխանցումների համակարգի անդամ:
- 2004թ. - Ստեղծվել է "Կոնվերս բանկի" ուսումնական կենտրոնը:
- Ներկայումս «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի առաջատար բանկերից և 31.12.04թ. դրությամբ ՀՀ բանկային համակարգում (հաշվի չառած 2004թ. վերահսկողության դաշտում գտնվող Հայկապ բանկը)`
- ընդհանուր կապիտալի մեծությամբ` 2-րդ տեղը (6 027,3 մլն դրամ),
 - 2004թ. հաշվեկշռային շահույթի մեծությամբ` 3-րդ տեղը (2 078,8 մլն դրամ),
 - ակտիվների մեծությամբ գրավում է 4-րդ տեղը (33 093,0 մլն դրամ),
 - հաճախորդներին տրված վարկերի ծավալով` 5-րդ տեղը (11 493,6 մլն դրամ):

ԲԱՆԿԻ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելության ձևակերպումն առաջին հերթին բխում է բաժնետերերի նպատակներից, շուկայում Բանկի գրաված դիրքից, Բանկի և իր հաճախորդների, բաժնետերերի ու անձնակազմի հարաբերությունների ֆորմատից:

Վերջին տարիներին Բանկի գործունեության զարգացումները չընդգծեցին Բանկի կենտրոնացումը մեկ սեգմենտի վրա, միակողմանի մասնագիտացումը, այլ բացահայտեցին Բանկի բազմակողմանի զարգացման ներուժը, ունիվերսալ և առաջադեմ առևտրային բանկ լինելու ունակությունը, ինչը պայմանավորված էր Բանկի մենեջմենթի և անձնակազմի հատկանիշներով, ֆինանսական ռեսուրսներին տիրապետելու հնարավորություններով և դրանք արդյունավետ կառավարելու ունակություններով:

Նախորդ տարիներին ձևակերպված առաքելությունը՝ Բանկի ընդհանուր կապիտալի շարունակական աճը շահույթների հաշվին, հաճախորդների լայն շրջանակին բազմաբնույթ բանկային ծառայությունների բարձրորակ մատուցումը, հուսալի գործընկերոջ իմիջի ձևավորումը, լիզերությունը ՀՀ բանկային համակարգում 2004թ. վերածնակերպում չկրեց, Բանկի գոյություն ունենալու պատճառներն անփոփոխ մնացին:

ԲԱՆԿԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ, ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկի դիրքի, զարգացման հնարավորությունների բացահայտման, իրատեսական գնահատականների տրման, ինչպես նաև հաճախորդների և գործընկերների համար դրանք ակնհայտ և հրապարակային դարձնելու նպատակով, Բանկը կարևորում է իր առավելությունների, ուժեղ կողմերի բացահայտման և հրապարակման անհրաժեշտությունը: Մեր գնահատականներով Բանկի ուժեղ կողմերը հետևյալն են՝

- սեփական կապիտալի բարձր մակարդակ, բավարար և նվազ ծախսատար ռեսուրսային բազա, իրացվելիության բարձր մակարդակ, պարտավորությունների կազմում խոշոր պարտավորությունների թույլ կենտրոնացում,
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն, անդամակցություն, նվազ ռիսկային ոլորտներում միջնաժամկետ ներդրումների առկայություն, ընդլայնման հնարավորություններ,
- սպասարկման բարձր որակ, բարձրակարգ սպասարկման միջավայր և տեսք, գլխամասային գրասենյակի տեղակայումը,
- մատուցվող ծառայությունների բազմաբնույթություն, արագագործություն և անընդհատ ընդլայնում, սակագների և դրույքների օպտիմալություն և ճկունություն, անընդհատ իրականացվող մարքեթինգ, ուղղվածություն VIP հաճախորդների բացահայտմանը, անհատական սպասարկմանը,
- ARCA և VISA համակարգերին անդամակցում, քարտային բիզնեսի, քարտերի սպասարկման ցանցի առկայություն, տվյալ բնագավառի հաճախորդների անընդհատ աճող բազա և սպասարկման ծավալներ,
- "Բանկ-հաճախորդ", հեռախոսակապի և ինտերնետի միջոցով ավտոմատացված սպասարկման համակարգերով ծառայությունների մատուցում,

- ՀՀ-ում և արտերկրներում վստահելի գործընկերների առկայություն, թղթակցային հաշիվների լայն ցանց, ձեռքբերված ճանաչվածություն,
- ՌԴ շուկայում ակտիվների ձևավորման փորձ և հնարավորություն,
- արդիականացված տեխնիկական պարկի, ծրագրային միջոցների, համակարգչային ցանցի առկայություն, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդելի կիրառում,
- բանկային ռիսկերի հսկողության, կանխարգելման համակարգի առկայություն,
- գուտ ոչ տոկոսային եկամուտների դրական արժեք՝ պայմանավորված վարչակառավարչական ապարատի պահպանման ծախսերի նվազ լինելով,
- ՀՀ շրջաններում և Երևանում մասնաճյուղային ցանցի առկայություն, մասնաճյուղերի հետ online կապի, մեկ սերվերի տեխնոլոգիայի կիրառում,
- անհրաժեշտ կազմակերպական կառուցվածք, աշխատանքային, ֆունկցիոնալ, գործառնական կանոնակարգվածություն, որակավորված անձնակազմ, անձնակազմի գնահատման համակարգի և խրախուսման առկայություն,
- որոշումների, իրավասությունների ապակենտրոնացման մոդելի կիրառում, որոշումների ընդունման համակարգերի կանոնակարգվածություն :

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հաճախորդների և գործընկերների հետ հարաբերությունների սկզբունքները

2003-2004թթ. հաճախորդների և նրանց գործառնությունների քանակի աննախադեպ աճի պայմաններում Բանկը որպես գլխավոր սկզբունք որդեգրել է ծառայությունների ստանդարտացման, օպտիմալ սակագնային քաղաքականության, բարձր սպասարկման որակի ապահովման մոտեցումները: Միաժամանակ, բացահայտելով հաճախորդների այն հատուկ խումբը, որն իրականացնում է բազմաբնույթ, մեծածավալ և հաճախակի գործառնություններ, Բանկը վերջիններիս նկատմամբ կիրառում է անհատական մոտեցումներ: Ընդհանուր մոդելը այս փոխհարաբերություններում կարելի է նկարագրել որպես գործարքի շահութաբերության, հաճախորդի հարմարության և բանկի արտադրողականության կոմպրոմիս:

Գործընկերների հետ հարաբերություններում Բանկն առաջնորդվում է փոխշահավետության սկզբունքով, բիզնես էթիկայի նորմերով, հուսալի գործընկերոջ իմիջի ապահովման սկզբունքով:

Բանկի համար առաջնային նորմերից են մատչելի և բաց հրապարակային քաղաքականության իրականացումը, շուկայի պարբերական մարքեթինգը, հարցումների, բարեգործական ակցիաների անցկացումը:

Բանկի ղեկավարների և աշխատակիցների հետ հարաբերությունների սկզբունքները.

Բանկի կողմից վարած կադրային քաղաքականությունն ապահովում է Բանկի աշխատակիցների նկատմամբ արդարացի, հետևողական և միաժամանակ խիստ վերաբերմունք: Կադրային քաղաքականությունը ներառում է կադրերի ընտրությունը, պաշտոնի բարձրացումը, կարգապահությունը, աշխատանքից ազատումը, վարձատրությունը, խրախուսումը, որակավորման անընդհատ բարձրացումը:

Բանկի ղեկավարների և անձնակազմի իրավասությունները և պարտականությունները կարգավորվում են ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, Բանկի կանոնադրությամբ, կադրային քաղաքականությամբ, ներբանկային կարգերով, որոշումներով և հրամաններով, աշխատանքային պայմանագրերով և պաշտոնեական հրահանգներով: Մուբորդինացիայի պահպանումը Բանկի համակարգում առաջնահերթ պայման է: Ըստ որոշումների կարևորության և պաշտոնների կանոնակարգված են որոշումների ընդունման

իրավասությունները, սահմանված են բանկային գործառնությունների իրականացման սահմանափակումները (լիմիտները) և պատասխանատվության շրջանակները:

2004թ.-ից Բանկն անցավ վարձատրության նոր համակարգի, ըստ որի աշխատակցի վարձատրության չափը կախված է վերջինիս կողմից զբաղեցվող պաշտոնի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանելուց, կատարված աշխատանքի ծավալներից և որակից:

Բանկային տեխնոլոգիաների առումով Բանկը նախընտրում է ունենալ միայն առաջավոր համակարգչային տեխնիկա, կիրառել ժամանակակից կիրառական տեխնոլոգիաներ, ինչն ուղղված է աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, գործընթացների աշխատատարության և ծախսատարության նվազեցմանը:

Միջոցների ներգրավման գործընթացում Բանկն առաջնորդվում է ռեսուրսների նվազ ծախսատարության և կայունության կոմպրոմիսային սկզբունքներով, միջոցների տեղաբաշխման գործընթացում՝ իրացվելիության բավարար մակարդակի ապահովման, ընդհանուր ակտիվներում վարկային պորտֆելի տեսակարար կշռի սահմանափակման, ի սկզբանե ռիսկային վարկերի բացառման, վարկերի վերադարձելիության ապահովման մեխանիզմների կիրառման սկզբունքներով:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկի հիմնական գործառնությունների և ծառայությունների ոլորտը հետևյալն է.

1) Բանկի գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները և/կամ ենթատեսակները՝

- հաճախորդների հաշվարկադրամարկղային սպասարկում,
- միջոցների փոխադրում, այդ թվում՝ առանց հաշվի բացման ֆիզիկական անձանց արագ փոխանցումների իրականացում WESTERN UNION, CONTACT, MIGOM, CONVERSE TRANSFER հատուկ համակարգերով,
- ARCA տեղական և VISA միջազգային վճարային համակարգերի պլաստիկ քարտերի տրամադրում և քարտերի սպասարկում, այդ թվում՝ ավտոմատ գանձման սարքերի միջոցով,
- Բանկ-հաճախորդ համակարգերի (bank-client, internet-banking, telephon-banking, fax-banking) միջոցով հաճախորդների սպասարկում,
- Ֆակտորինգային գործառնությունների՝ ապրանքների ապառիկ ձեռքբերման նպատակով ֆինանսավորման իրականացում,
- երաշխավորությունների տրամադրում,
- վարկավորում՝ ա/ Համաշխարհային բանկի ՉՁ և ԳԲԱ ծրագրերով, բ/ Գերմանահայկական հիմնադրամի մանր և միջին ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների վարկավորման ծրագրով, գ/ USAID վարկավորման ծրագրերով, դ/ ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով/, ե/ ոսկյա իրերի, թանկարժեք քարերի գրավադրմամբ, զ/ անշարժ գույքի վերանորոգման և կառուցման նպատակով, է/ հիփոթեքային, ը/ ուսանողների ուսման վարձերը վճարելու նպատակով, թ/ վարկային գծերի տրամադրում, ժ/ օվերդրաֆտների տրամադրում (այդ թվում՝ պլաստիկ քարտերով), առաջնակարգ ապահովված և այլ վարկերի տրամադրում:
- արժեթղթերով գործառնություններ, այդ թվում՝ ՀՀ պետական և ՌԴ արժեթղթերի շուկայում,
- ցպահանջ, ժամկետային, կուտակային և երեխաների անունով բացվող ավանդների ընդունում,
- արժույթային գործառնություններ, միջբանկային ավանդների տեղաբաշխում և ներգրավում,

2) ֆինանսական ծառայությունների շուկայում նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների, տարածաշրջանների հետևյալն են.

- տնտեսության ճյուղերից՝ ա/ արդյունաբերության ճյուղերից՝ սննդամթերքի, էներգետիկայի ճյուղերը, բ/ առևտրի հատվածը, գ/ շինարարության ճյուղը, դ/ գյուղատնտեսությունը, ե/ սպառողական վարկերի հատվածը,
- արժեթղթերի շուկան՝ ՀՀ Պետական արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկան, ՌԴ ոչ պետական կորպորատիվ արժեթղթերի՝ էներգակիրներ արտադրող, հեռակապի կորպորացիաների սովորական բաժնետոմսերի շուկան,
- ՀՀ տարածաշրջաններից՝ Երևանի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի մարզերը, նոր նպատակային հատվածներն են՝ ՀՀ տնտեսապես ակտիվ մարզերը, խոշոր մարզկենտրոնները՝ Սյունիքի, Լոռու մարզերը,
- միջոցների փոխադրման նպատակադրված աշխարհագրությունն է՝ ՌԴ (հիմնականը՝ Մոսկվա քաղաք), ԱՄՆ, Վրաստանը, Ուկրաինան, Թուրքիան,
- արժույթային շուկան, այդ թվում՝ ՌԴ արժույթային շուկան,

3) հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների ռեզիդենտության, իրավական կարգավիճակի.

- ռեզիդենտ հաճախորդները՝

ա/ ֆիզիկական անձիք՝ ժամկետային և ցպահանջ ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, սպառողական վարկերի, պլաստիկ քարտերի, արտարժույթային գործառնությունների և միջոցների փոխադրման բնագավառում,

բ/ իրավաբանական անձիք, անհատ ձեռներեցներ՝ ցպահանջ ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, վարկավորման, աշխատավարձային պլաստիկ քարտերի, արտարժույթային գործառնությունների և միջոցների փոխադրման բնագավառում,

- ոչ ռեզիդենտ հաճախորդները՝

ա/ ֆիզիկական անձիք՝ ժամկետային և ցպահանջ ավանդների, պլաստիկ քարտերի, արտարժույթային գործառնությունների և միջոցների փոխադրման բնագավառում,

բ/ իրավաբանական անձիք, անհատ ձեռներեցներ՝ ցպահանջ ավանդների, հաշվարկադրամարկղային սպասարկման, արտարժույթային գործառնությունների և միջոցների փոխադրման բնագավառում:

Որպես հաճախորդների առանձին խումբ, նպատակային խումբ են հանդիսանում VIP հաճախորդները, որոնց ծրագրված է մատուցել ծառայությունների ամբողջական փաթեթ հատուկ ռեժիմներով:


ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

Բանկի օտարերկրյա թղթակցային հաշիվների ցանկը ընդգրկում է 18 երկրներում, 41 բանկերում բացված թղթակցային հաշիվներ: Արտերկրում Բանկի թղթակցից բանկերն են՝

Թղթակցից բանկի անվանումը	Բանկի վարկանիշը ըստ Moodys-ի	Երկիր	Քաղաք
DEUTSCHE BANK AG	Aa3	GERMANY	FRANKFURT AM MAIN
KBC BANK NV	Aa3	BELGIUM	BRUSSELS

AMERICAN EXPRESS BANK LTD.	A2	USA	NEW YORK
COMMERZBANK AG	A2	GERMANY	FRANKFURT AM MAIN
DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS	A1	USA	NEW YORK
ВНЕШТОРГБАНК	Ba1	РОССИЯ	МОСКВА
AS SAMPO BANK	A2	ESTONIA	TALLINN
PAREX BANK	Ba1	LATVIA	RIGA
СБЕРБАНК РОССИИ	Ba1	РОССИЯ	МОСКВА
АЛЬФА БАНК	Ba2	РОССИЯ	МОСКВА
ПРОМСВЯЗЬ БАНК	B1	РОССИЯ	МОСКВА
AKBANK TAS STAMBUL	B2	TURKEY	ISTANBUL
УКРСОЦБАНК	B2	УКРАИНА	КИЕВ
ОАО БАНК ЦЕНТМКРЕДИТ	Ba1	КАЗАХСТАН	АЛМАТА
МЕЖДУНАРОДНЫЙ БАНК ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ	-	РОССИЯ	МОСКВА
ОРГРЕС БАНК	-	РОССИЯ	МОСКВА
РУССКИЙ СЛАВЯНСКИЙ БАНК	-	РОССИЯ	МОСКВА
БАНК ТОРГОВОГО ФИНАНСИРОВАНИЯ	-	РОССИЯ	МОСКВА
БАНК МОСКОВСКИЙ КАПИТАЛ	-	РОССИЯ	МОСКВА
RAIFFEISEN CENTROBANK AG	-	AUSTRIA	VIENA
ДИАЛОГ БАНК	-	УКРАИНА	ДНЕПРОПЕТРОВСК
UNION DE BANQUES ARABES FRANCAISES	-	FRANCE	PARIS
"АЖИО" АКЦИОНЕРНЫЙ БАНК	-	УКРАИНА	КИЕВ
ИНТЕЛЛЕКТ БАНК	-	ГРУЗИЯ	ТБИЛИСИ
ЕВРОТРАСТБАНК	-	РОССИЯ	МОСКВА
FEDERAL BANK OF THE MIDDLE EAST	-	CYPRUS	NICOSIA
КОМЕРЦИЈАЛНА БАНК АД БЕОГРАД	-	Serbia and Montenegro	BELGRAD/ SERBIA
FEDERAL BANK OF LEBANON	-	LEBANON	BEIRUT
МЕЖГОСБАНК	-	РОССИЯ	МОСКВА
АЗИА УНИВЕРСАЛ БАНК	-	КЫРГЫЗСТАН	БИШКЕК
УНИВЕР БАНК АКБ	-	РОССИЯ	МОСКВА
BC MOLDINDCONBANK S.A.	-	MOLDOVA	KISHNEV
ГЛОБЭКС БАНК	-	РОССИЯ	МОСКВА

AS TRASTA KOMERSBANKA	-	LATVIA	RIGA
AB UKIO BANKAS	-	LITHUANIA	CAUNAS
УКРПРОМБАНК	-	УКРАИНА	КИЕВ
RIETUMU BANKA	-	LATVIA	RIGA
АКБ КЫРГИЗСТАН	-	КЫРГЫЗСТАН	БИШКЕК
АКБ МЕЖОТРАСЛЕВОЙ ПРОМЫШЛЕННЫЙ БАНК	-	РОССИЯ	МОСКВА
МАСТ-БАНК	-	РОССИЯ	МОСКВА
AMERICAN EXPRESS BANK GMBH	-	GERMANY	FRANKFURT AM MAIN



2004թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մրցակցային վարքագծի ազդեցությունը

2004թ. ՀՀ բանկերի համար արձանագրվեց որպես 2003թ. սկիզբ առած մրցակցության թեժացման հետագա շարունակական ժամանակաշրջան՝ մրցակցության որակական նոր հարթակում: 2003թ.-ից բանկերի որակապես փոխված վարքագիծը 2004թ. ռեսուրսային բազայի ընդլայնման և տեղաբաշխման ազդեցիվ քաղաքականության դրսևորում ունեցավ: 2004թ. մակրոտնտեսական զարգացումները ընդհանուր առմամբ բարենպաստ էին ՀՀ բանկային համակարգի զարգացումների համար, այդ թվում միջնաժամկետ և երկարաժամկետ

ներդրումների աճի տեսակետից: 2004թ. ընթացքում շարունակելով նախկինում ձևավորված զարգացման միտումները, համակարգը դրսևորեց էական աճ՝ քանակական ցուցանիշների աճին գուցահեռ ապահովելով նաև որակական ցուցանիշների բարելավում:

2004թ. բանկային համակարգը թերևս չի արձանագրել կարևոր ցուցանիշների վատթարացում:

2004թ. բանկերի գործելու նախկին ավանդական մեթոդները վերջնականապես զիջեցին իրենց տեղը հեռանկարային ուղղվածություն ունեցող մոտեցումներին, իսկ Բանկերի կատարած տեխնոլոգիական, կազմակերպական ներդրումները արդարացվեցին: Դրա ապացույցն են, օրինակ, պլաստիկ քարտերի քանակի 60%-ի չափով աճը, քարտերի սպասարկման կետերի աճը ավելին քան 50%-ով, սպասարկման հեռակառավարման համակարգերի (բանկ-հաճախորդ համակարգեր) տարածումը, կոմունալ վճարումների համակարգի ինտեգրացումը բանկային համակարգին, փոխառվածությունների տրամադրման, պահանջների ֆինանսավորման նոր տեխնոլոգիաների կիրառումը, նոր ծրագրային համակարգերի ձեռքբերումը, ռիսկերի դիվերսիֆիկացումը բանկերի կողմից՝ շեշտը դնելով մանրածախ ծառայություններին:

Իր զարգացման միջնաժամկետ ծրագրի համաձայն, 2004թ. Բանկը իրականացրեց բնագավառների զարգացմանն ուղղված միջոցառումներ: Նախորդ տարի Բանկը ծրագրավորելով իր միջնաժամկետ ծրագիրը և 2004թ. խնդիրները, կանխորոշեց բանկային համակարգի հիմնական զարգացումները՝ մրցակցության թեժացումը, ակնկալելով և փաստացի արձանագրելով 2004թ. նոր՝ ռեսուրսներին և կարգաբերված տեխնոլոգիաներին տիրապետող բանկերի ՀՀ շուկա մուտքի գործընթացի հետաձգումը և 2004թ. գործեց իր ծրագրի և փաստացի արձանագրված սպասումների շրջանակներում: Բանկը էականապես բարելավեց իր վարկային պորտֆելի որակը, ընդլայնեց փոքր և միջին բիզնեսի վարկավորման, սպառողական վարկերի բնագավառը, էապես մեծացրեց հաճախորդների բազան և ընդլայնեց ծառայությունների շրջանակը՝ ապահովելով բանկային համակարգի ընդհանուր հիմնական զարգացումներից ավելի բարձր արդյունքներ:

2004թ. իրավաբանական անձանց համար կանխիկ դրամի շրջանառության օրենսդրական սահմանափակումները, ավանդների պարտադիր ապահովագրությունը աջակցեցին բանկերի ռեսուրսային բազայի ընդլայնմանը, հավասարակշռելով միջոցների տեղաբաշխման առաջանցիկ պահանջին, ինչը շահեկան էր նաև Բանկի համար:

2004թ. էական ռիսկերը

2004թ. Բանկի համար հետագա զարգացման հնարավորություններին և զարգացմանը խոչընդոտող սպառնալիքներ՝ առավել կարևոր ռիսկեր հանդիսացան՝

- ֆինանսական ռիսկերից՝ արտարժույթային և տոկոսային ռիսկերը,
- այլ երկրի (ՌԴ) ռիսկը, այդ թվում ներդրումային գործոնը,
- նոր մրցակիցների գործոնը,
- մասնաճյուղային ցանցի ընդլայնման գործոնը:

Արտարժույթային ռիսկերը ուղղակի բացասական արդյունք ունեցան ՀՀ ամբողջ բանկային համակարգի ֆինանսական արդյունքների վրա: Կարևորելով այս ռիսկերի մինիմալացման խնդիրը, Բանկը նախանշեց նվազագույն ռիսկերի ապահովման քաղաքականությունը՝ սահմանափակ արտարժույթային դիրք, սպեկուլյատիվ գործառնությունների բացառում: Այս մոդելը չբացառեց ամբողջությամբ Բանկի այս ռիսկերը՝ արտարժույթի նկատմամբ Բանկի հաճախորդների պահանջարկի հետևանքով: 2004թ. ներքին նորմատիվների համակարգով սահմանվեցին դիրքերի, գործառնությունների, դիվերսիֆիկացիայի նորմատիվներ, ինչը որոշակիորեն ապահովեց ռիսկերի զսպումը: Կիրառված մոտեցումները բերեցին այս գործունեության աննախադեպ 286 մլն դրամի գուտ եկամտի:

ՀՀ բանկային համակարգի տոկոսադրույքների ակնկալվող զարգացումները՝ մարժայի կրճատումը, Բանկի համար չբերեց զուտ տոկոսային եկամուտների նվազեցման: Բանկային համակարգում միջոցների ներգրավման տոկոսադրույքների չնվազելու պարագայում, ժամկետային ավանդների ծախսատարությունը գրեթե փոփոխություն չկրեց՝ տատանվեց 6.0-6.5 տարեկան տոկոսի շրջանակներում, իսկ վարկերի եկամտաբերությունը նվազեց 19-ից 16% (բանկային համակարգում նույնպես նվազեց), միաժամանակ ապահովվեց վարկերից եկամուտների 29%-ի աճ՝ ի հաշիվ ծավալների ավելացման: Ընդհանուր առմամբ Բանկը վարեց տոկոսադրույքների հավասարակշռված քաղաքականություն՝ ապահովելով ծրագրային ցուցանիշները:

Ռ-Գ արժեթղթերի գրավիչ շուկան 2004թ. արձանագրեց տատանումներ՝ հիմնականում պայմանավորված Յուկոսի և նրա հարակից կազմակերպությունների գործընթացների հետ: Այս երևույթը թողեց իր ազդեցությունը Բանկի արդյունքների վրա, սակայն հնարավոր եղավ հաղթահարել Ռ-Գ արժեթղթերից տարվա ընթացքում առաջացած ընթացիկ կորուստները՝ ժամանակին կարգավորելով պորտֆելը, և տարին եզրափակել 46 մլն դրամի զուտ եկամուտով:

Ոչ ռեզիդենտ հաճախորդների շուկան՝ հանդիսանալով Բանկի համար ռազմավարական ուղղություն, կարող էր հանդիսանալ Բանկի համար եկամուտների նվազման գործոն: Սակայն հարկ է նշել, որ ռիսկի այս գործոնին հակազդող միջոցառում հանդիսացավ Մոսկվա քաղաքում Բանկի ներկայացուցիչի առկայությունը, որը նոր հաճախորդների ներգրավման միջոցով ոչ միայն հակազդեց հաճախորդների հնարավոր արտահոսքին, այլև նպաստեց ոչ ռեզիդենտներից եկամուտների ավելացմանը: 2004թ. եկամուտները ոչ ռեզիդենտ հաճախորդներից աճեցին 23.2%-ով կամ 139 մլն դրամով:

Մասնաճյուղային ցանցի ընդլայնման գործոնը, Բանկի համար հանդիսանալով նոր գործընթաց, ենթադրում էր հնարավոր ռիսկերի դաշտ: Վերջիններիս համար կազմակերպված աշխատանքային մոդելը՝ մեկ սերվերի տեխնոլոգիան, էականորեն նվազեցրեց հնարավոր գործառնական ռիսկերը, ծախսերի բարձր մակարդակը: Ստեղծվող մասնաճյուղերի ներդրումային ծախսերի ինքնաձեռնարկային նախագծային ժամանակաշրջանը ընդունվեց 9 ամիս: Բոլոր մասնաճյուղերը 2004թ. ավարտին՝ ղեկավարներին աշխատում էին ընթացիկ շահույթով, իսկ ներդրումային ծախսերի ինքնաձեռնարկային փաստացի ժամանակաշրջանները որոշ մասնաճյուղերի համար կարող են երկարաձգվել մինչև 12 ամիս: Ծախսերի ինքնաձեռնարկային արագացման նպատակով որոշվեց հետագայում վերանայել՝ ընդլայնել ստեղծված մասնաճյուղերի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակը:

Ինչպես և սպասվում էր՝

- 2004թ. մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում եղավ այնպիսին, որ ուժերի հնարավոր վերաբաշխումը չբերեց Բանկի առկա հիմնական մասնաբաժինների կրճատմանը և բանկային համակարգում արտաքին ռեսուրսներին և կարգաբերված բանկային տեխնոլոգիաներին տիրապետող նոր մասնակիցների ի հայտ գալը ընթացիկ տարում զգալի ազդեցություն չունեցավ Բանկի ցուցանիշների վրա, ինչը թույլ տվեց ամրապնդել Բանկի առաջատար դիրքերը՝ հետագայում գործընթացին դիմակայելու սպասումներով,

- վարկային կազմակերպությունների ազդեցությունը, շուկայում վերջիններիս փոքր մասնաբաժնի հետևանքով, ինչպես բանկային համակարգի և այնպես էլ Բանկի գործունեության վրա էական ազդեցություն չունեցավ:

- ընդհանուր կապիտալի նորմատիվի պահանջը չբավարարող բանկերի ձեռքբերումը 2004թ. արտաքին ռեսուրսներին և կարգաբերված բանկային տեխնոլոգիաներին տիրապետող նոր մասնակիցների կողմից սրեց Բանկի սպասումները հետագա մրցակցության տեսակետից և հետագա ռազմավարության ճշգրտման գործոն կհանդիսանա:

Կարևորելով ռիսկերի միմիմալացման խնդիրը՝ Բանկը նախանշել է նվազագույն ռիսկերի ապահովման քաղաքականության ստրատեգիական ուղղությունը, իսկ ռիսկերի նվազեցման նպատակով գործում է ներքին նորմատիվների ամբողջական համակարգի շրջանակներում:


Բանկի հիմնական նվաճումները 2004թ.

2004թ. Բանկի հիմնական նվաճումներն են՝

1. “FINANCIAL TIMES” կազմակերպության “THE BANKER” ամսագրի կողմից Անգլիայում կազմակերպվող ամենամյա «SIF-ՎԱ ԲԱՆԿ» մրցանակաբաշխությանը Բանկին շնորհվեց 2004թ. «SIF-ՎԱ ԲԱՆԿ» տիտղոսը,
2. ՀՀ ՖԷՆ և ԿԲ կողմից Բանկին շնորհվեց «2004թ. ՀՀ ներքին պետական պարտքի կառավարման լավագույն գործակալ» տիտղոսը,
3. Բանկի մասնաճյուղերի քանակը ավելացավ 7-ով և կազմեց 13,
4. 2004թ. ակտիվ հաճախորդների (Բանկի հետ մեկ տարուց ավել համագործակցող) քանակն աճել է 45.2%-ով,
5. Շահույթն աճեց 3.4 անգամ և կազմեց 2 078 մլն դրամ,
6. Բանկը կապիտալի մեծությամբ ՀՀ բանկային համակարգում գրավեց 2-րդ տեղը,
7. ROA ցուցանիշը կազմեց 5%,
8. 2004թ. ArCa տեղական և VISA միջազգային պլաստիկ քարտերի քանակն աճեց 46.3%-ով և կազմեց 8728 հատ,
9. Էականորեն նվազեց վարկային ռիսկը և կազմեց 1.5%,
10. Ներդրվեց հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգը,
11. Ստեղծվեց CONVERSE TRANSFER արագ փոխանցումների սեփական համակարգը,
12. Ներդրվեց WESTERN UNION միջազգային փոխանցումների համակարգը,
13. Ներդրվեց կոմունալ վարձավճարների ընդունման համակարգը,
14. Ներդրվեց մասնաճյուղերի հետ online կապը, «մեկ սերվերի» տեխնոլոգիան,
15. Բանկում ներդրվեց աշխատատեղերի գնահատման և վարձատրության նոր համակարգ,
16. Ստեղծվեցին և ներդրվեցին ներքին նորմատիվների, ամբողջական տեղեկատվական և ստորաբաժանումների ու բանկային պրոդուկտների ինքնարժեքի հաշվառման համակարգերը,
17. Լիարժեքորեն կանոնակարգվեց Բանկի գործունեությունը, իրականացվեցին կառուցվածքային բարեփոխումներ,
18. Կատարելագործվեց ներքին հսկողության համակարգը:

Հաճախորդների կազմ


2004թ. հաճախորդների քանակն աճել է 45.2%-ով: Հաճախորդների աճը պայմանավորվեց մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ, մանրածախ ծառայությունների ընդլայնմանն ուղղված միջոցառումներով, թողարկած պլաստիկ քարտերի քանակով և համապատասխանաբար, դրանցից օգտվող ֆիզիկական անձանց քանակի աճով: Բոլոր գործառնությունների գծով Բանկում սպասարկած՝ գրանցված հաճախորդների քանակը տարեվերջին կազմել է 49190 հաճախորդ:



Ակտիվ հաճախորդներից ֆիզիկական անձինք տարեվերջին կազմել են հաճախորդների 83.5%, իրավաբանական անձիք՝ 16.5%, ընդ որում, ոչ ռեզիդենտ հաճախորդները կազմեցին ընդհանուր քանակի մոտ 10%-ը:

Ծառայություններ

- 2004թ. Բանկում ներդրված նոր ծառայություններն են՝
- Ֆիզիկական անձանց արագ փոխանցումները նորաստեղծ ConverseTransfer համակարգի միջոցով Ռ-Ռ, Վրաստան, Թուրքիա, Սերբիա և Մոնտենեգրո, Ռուրաիմա, Մոլդովա, Արցախ,
 - WESTERN UNION համակարգով ֆիզիկական անձանց արագ փոխանցումները,
 - նոր տեսակի՝ տոնական ավանդը,
 - կոմունալ վարձավճարների (գազի, ջրի, Էլեկտրաէներգիայի, հեռախոսի) ընդունման ծառայությունը Բանկի սպասարկման սրահներում և բանկոմատներում, դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը telephon banking ավտոմատացված համակարգի միջոցով,
 - բջջային հեռախոսների լիցքավորման Easy քարտերի, ինտերնետային քարտերի վաճառքը,
 - հեռակառավարման համակարգերով հաճախորդների հաշիվների սպասարկման նոր համակարգերը (ինտերնետ-բանկինգը, Ֆաքս-բանկինգը),
 - վճարային համակարգերի ավտոմատ տեղեկատուն՝ փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը telephon banking ավտոմատացված համակարգի միջոցով,
 - թղթակցային ցանցի օպտիմալացման արդյունքում նվազեցված սակագներով արտերկիր փոխանցումների իրականացումը,
 - հաճախորդներին ինտերնետով հաշիվների քաղվածքների տրամադրումը,
 - երկրորդային շուկայից ավտոմեքենաների ձեռք բերման նպատակով վարկավորումը,
 - անշարժ գույքի ձեռքբերման /հիփոթեքային/ վարկավորումը:




2004թ. իրականացված սակագնային քաղաքականությունը ապահովեց սպասարկման ծավալների ավելացում: Այսպես, օրինակ, ստացված զուտ կոմիսիոն գումարներն աճեցին 13 %-ով, իսկ զուտ տոկոսային եկամուտներն աճեցին 12.4 %-ով):

Ճկուն սակագնային քաղաքականության միջոցով ընդլայնվեցին ոչ ռեզիդենտ հաճախորդներին մատուցվող ծառայությունների ծավալները՝ եկամուտները ոչ ռեզիդենտներից աճեցին 1.37 անգամ և կազմեցին 734 մլն դրամ:

Նշենք, որ 2004թ. Բանկի գլխամասային գրասենյակում ներդրվեց հերթերի կառավարման Էլեկտրոնային նոր համակարգ, որն ապահովեց հաճախորդների սպասարկման հարմարավետությունը:

Պլաստիկ քարտեր

2004թ. զգալիորեն ընդլայնվեցին ArCa տեղական և VISA միջազգային պլաստիկ քարտերի թողարկման (քարտերի քանակն աճեց 2764-ով կամ մոտ 46%-ով և կազմեց 8728) և սպասարկման ծավալները (եկամուտները սպասարկումից աճեցին 42.6 մլն դրամով կամ մոտ 2.5 անգամ): Պլաստիկ քարտերի սպասարկման ծավալները ավելացան նաև ի հաշիվ սպասարկման կետերի ավելացման (սպասարկման կետերը ավելացան 56-ով և կազմեցին 101), այդ թվում՝ նոր բանկոմատների (սարքերն ավելացան 1-ով և կազմեցին 7) հաշվին: Հատկանշական է, որ Բանկը VISA Int-ից ստացավ և տեղադրեց վերգետնյա կայան, որի օգտագործումը թույլ տվեց բարելավել VISA համակարգի հետ կապի անընդհատությունը, օգտագործելով այդ նպատակով IP կապ (արբանյակային ալեհավաքի միջոցով), ինչպես նաև 2004թ-ին VISA Int.-ը Բանկում անցկացրեց RISK REVIEW, որը ուղղված էր քարտային ծրագրերի իրականացման հետ կապված գործառնական ռիսկերի նվազեցմանը:



Վարկային գործունեություն

Տրված վարկերից և օվերդրաֆտներից տոկոսային եկամուտները 2004թ.-ին 2003թ.-ի նկատմամբ աճեցին 500.1 մլն դրամով կամ 28.9%-ով և կազմեցին 2229.0 մլն դրամ: Տարեվերջին վարկային պորտֆելը աճեց 2534 մլն դրամով կամ 27.8%-ով և կազմեց 11,647 մլն դրամ կամ ակտիվների 35.2%-ը:

Գեռևս 2003թ-ից Բանկը նախանշեց վարկավորման նոր գրավիչ երկու դաշտ՝ նոր սպառողական և Գերմանահայկական հիմնադրամի ծրագրով փոքր և միջին բիզնեսի վարկավորման ոլորտները: 2004թ. հիմնական շեշտը դրվեց հենց այս ուղղությունների վրա:

Միջոցներն ըստ ծրագրվածի ուղղվեցին Գերմանահայկական հիմնադրամի ծրագրով փոքր և միջին բիզնեսի վարկավորման ոլորտ (տարեվերջին վարկավորման ծավալները աճեցին 57.3%-ով և կազմեցին 2108 մլն դրամ), սպառողական վարկեր (տարեվերջին վարկավորման ծավալները աճեցին 37.8%-ով և կազմեցին 3434 մլն դրամ): Բանկը շարունակեց համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Այսպես, Համաշխարհային բանկի ՁՁ ծրագրերով վարկավորման ծավալները աճեցին 75.8%-ով և տարեվերջին կազմեցին 82.6 մլն դրամ, իսկ ԳԲԱ ծրագրերով վարկավորման ծավալները տարեվերջին կազմեցին 489.9 մլն դրամ: USAID-ի վարկերի երաշխիքային ծրագրի շրջանակներում կատարած վարկավորման ծավալները աճեցին շուրջ 4 անգամ և կազմեցին 465.4 մլն դրամ: 2004թ. գործեց և ավարտվեց USDA վարկավորման ծրագիրը:

2004թ. տնտեսության ճյուղերից հիմնական ներդրումային ոլորտ հանդիսացան սպառողական վարկերի ճյուղը՝ ներդրումները կազմեցին 3434 մլն դրամ կամ ներդրումների 27.3%-ը, արդյունաբերության ճյուղը՝ ներդրումները կազմեցին 2637 մլն դրամ կամ ներդրումների 20.9%-ը, որից էներգետիկայի ճյուղում՝ 1000 մլն դրամ, սննդամթերքի արդյունաբերությունում 1195 մլն դրամ, առևտուրը՝ 2939 մլն դրամ կամ ներդրումների 23.4%-ը ու գյուղատնտեսությունը՝ 511 մլն դրամ կամ ներդրումների 4%-ը:

2004թ. ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հաճախորդների վարկավորման ծավալներն աճեցին մոտ 1.55 անգամ և տարեվերջին կազմեցին 1 202 մլն դրամ: Սպառողական վարկավորման ոլորտը համալրվեց անշարժ գույքի ձեռք բերման նպատակով տրվող հիփոթեքային վարկերով, որոնց գծով ներդրումները տարեվերջին կազմեցին 234.5 մլն դրամ:

2003թ. Բանկի համար ազդանշանային էր վարկային ռիսկի նվազեցման խնդրի իմաստով: Այս հանգամանքը 2004թ. Բանկի վարկավորման քաղաքականության ճշգրտման գործոն հանդիսացավ, և որպես նոր, նվազ ռիսկայնությամբ ուղղություն ընտրված փոքր և միջին բիզնեսի վարկավորման և սպառողական վարկերի շնորհիվ էականորեն նվազեց վարկային ռիսկը. պահուստների և վարկերի հարաբերակցությունը նվազեց ու կազմեց 1.5%: Նշենք նաև, որ 2004թ. առաջ եկած ներմուծման և արտահանման ֆակտորինգային գործառնությունների բարձր ռիսկը հանգեցրեց այս ուղղության փակմանը:


Ներդրումային գործունեություն

2004թ. Բանկի արժեթղթերի պորտֆելի միջին ծավալը կազմել է 2717.3 մլն դրամ, որից մոտ 82%-ը կամ 2263.7 մլն դրամը՝ ՀՀ պետական արժեթղթերն են: Ոչ պետական արժեթղթերի հիմնական ծավալը՝ միջին չափով 383 մլն դրամ, ներդրումներն էին Ռ-Դ ոչ պետական արժեթղթերում:

Տարեվերջին արժեթղթերի ծավալը կազմեց 4654 մլն դրամ կամ ակտիվների 14%-ը, որից ՀՀ պետական արժեթղթերը կազմեցին 3844 մլն դրամ, ոչ պետական արժեթղթերը՝ 290 մլն դրամ, ռեպո համաձայնագրերը՝ 520 մլն դրամ:


2004թ. Բանկը պահպանեց ՀՀ արժեթղթերի շուկայում լիդերի դերը: ՀՀ պետական արժեթղթերից տոկոսային եկամուտները աճեցին 68.2 մլն դրամով կամ մոտ 18%-ով և կազմեցին 446.9 մլն դրամ: Արժեթղթերի վաճառքից (այդ թվում Ռ-Դ ոչ պետական արժեթղթերի գծով) ստացված զուտ եկամուտները աճել են 56.7 մլն դրամով կամ 45.2%-ով և կազմել 182 մլն դրամ, ընդ որում, ՀՀ պետական արժեթղթերի գծով ստացվել է 146.6 մլն դրամի եկամուտ, որը ՀՀ բանկային համակարգի լավագույն ցուցանիշն է և էական մասնաբաժինը:

2004թ. Բանկի ներդրումները արժեթղթերում պայմանավորվեցին երկու հիմնական գործոնով՝ իրացվելիության անհրաժեշտ մակարդակի պահպանման նպատակով և գրավիչ եկամտաբերությամբ:



Բանկի կապիտալիզացիա

Բանկն արդեն իսկ ապահովել է ընդհանուր կապիտալի նկատմամբ ՀՀ ԿԲ 5 մլն ԱՄՆ դոլարի նորմատիվային պահանջը, որը ուժի մեջ է 2005թ. հուլիսի 1-ից: Ընդհանուր կապիտալը 2004թ. աճեց 1.79 անգամ կամ 2654.9 մլն դրամով և կազմեց 6 027,3 մլն դրամ: Բանկի կապիտալի աճը ձևավորվեց 2004թ. շահույթի և 1232 մլն



դրամի լրացուցիչ կապիտալի՝ հիմնական միջոցների վերագնահատման հաշվին:



Շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) 2004թ.-ին կազմեց 127.6%: Այս պարագայում, սեփական կապիտալի տեսակարար կշիռը պասիվներում տարեվերջին կազմեց 18.2%:

Բանկի պարտավորությունները

Բանկի պարտավորությունները 2004թ. ընթացքում նախորդ տարվա նկատմամբ աճեցին մոտ 5.2 մլրդ դրամով կամ 23.7%-ով և կազմեցին 27.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա նկատմամբ ռեսուրսային բազան ենթարկվեց որոշ կառուցվածքային փոփոխությունների: Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված էր.

- թղթակցային հաշիվների 1602 մլն դրամի աճով,
- ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունների ծավալի 928 մլն դրամի կամ 35%-ի աճով,
- իրավաբանական անձանց դեպոզիտների 353 մլն դրամի կամ 38.5% աճով,
- ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունների 520 մլն դրամի աճով,
- այլ պարտավորությունների 3741 մլն դրամ կամ 4.3 անգամ աճով (հիմնականում հաճախորդների վճարային հոսքերի հաշվին):

Հատկանշական է, որ չնայած ոչ ռեզիդենտ հաճախորդներից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների բազան տարվա ընթացքում նվազեց 2.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմեց 7.4 մլրդ դրամ կամ այս ռեսուրսների 45.7%-ը, այն չհանգեցրեց Բանկի պարտավորությունների նվազեցման. անգամ այս պարագայում Բանկի պարտավորությունները աճեցին 5.2 մլրդ դրամով կամ 23.7%-ով:



Հաշվեկշիռ

(հազ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2004թ.	2003թ.
Ակտիվներ, որից	33,093,030	25,254,070
Դրամական միջոցներ	12,663,101	10,602,226
Արժեթղթեր	4,654,318	3,445,629
այդ բվում՝ ՀՀ պետական արժեթղթեր	3,844,372	3,097,517
Ավանդներ ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում, բանկերին տրված վարկեր	1,191,907	192,440
Հաճախորդներին տրված վարկեր	11,647,714	9,114,021

Ֆակտորինգ	414,341	682,889
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ	2,380,843	836,086
Պարտավորություններ, որից	27,065,697	21,878,680
ՀՀ կենտրոնական բանկի, այլ բանկերի նկատմամբ	1,500,000	1,515,822
Բանկային հաշիվներ, ցլահանջ ավանդներ	11,954,237	11,642,754
Ժամկետային ավանդներ	6,594,570	7,503,017
Կապիտալ, որից	6,027,333	3,375,390
Չբաշխված շահույթ (վնաս)	3,158,928	1,861,234

Բանկի ակտիվները

Բանկի ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճեցին 7 839 մլն դրամով կամ 31%-ով և կազմեցին 33093 մլն դրամ: Ակտիվների կազմում կառուցվածքային փոփոխությունները հետևյալն էին.

- դրամական միջոցներն աճեցին 2.1 մլրդ դրամով կամ 19.4 %-ով և կազմեցին ընդհանուր ակտիվների 38.3%-ը,

- ոչ ռեզիդենտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտները նվազեցին 533 հազ. դրամով և կազմեցին 192 մլն դրամ:


- պետական արժեթղթերն աճեցին 741 մլն դրամով կամ 1.3 անգամ և կազմեցին 3.8 մլրդ դրամ կամ ակտիվների 11.6%-ը, ինչը հիմնականում պայմանավորվեց վերջիններիս բավարար եկամտաբերությամբ և իրացվելիության բարձր մակարդակով,

- այլ արժեթղթերն նվազեցին 53 մլն դրամով կամ 15%-ով և կազմեցին 294 մլն դրամ կամ ակտիվների 1.1%-ը,

- ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում ավանդները և այլ բանկերին տրված վարկերը աճեցին 999.5 մլն դրամով կամ 6.2 անգամ՝ կազմելով 1 192 մլն դրամ, և կազմեցին ակտիվների 3.6%-ը,

- վարկային ներդրումները աճեցին 27.8%-ով կամ 2533.7 մլն դրամով և կազմեցին ընդհանուր ակտիվների 35.2%-ը,

- ֆակտորինգային գործառնությունների ծավալները նվազեցին 268.5 մլն դրամով կամ 39.3%-ով և կազմեցին 414.3 մլն դրամ կամ ընդհանուր ակտիվների 1.3%-ը, ինչը պայմանավորվեց ներմուծման և արտահանման ֆակտորինգային գործառնությունների ուղղությունից Բանկի հրաժարվելու հանգամանքով:




Բանկի նորմատիվները

Բանկի նորմատիվների փաստացի մեծությունները բնորոշեցին նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները տարեվերջին կազմեցին՝

Բանկի նորմատիվները	Փաստացի մեծությունը 31.12.04թ.	ՀՀ Կենտրոնական բանկի սահմանափակ նորմատիվի քույլաարեղի մեծությունը
Ընդհանուր (սեփական) կապիտալ նվազագույն չափը (հազ.դրամ)	4473835	1,132,000
Ն11՝ ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	26.41%	12%
Ն12. հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	24.84%	8%
Ն21 բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը	51.63%	20%
Ն22 բարձր իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը	91.84%	80%
Ն3 մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	18.15%	20%
Ն 4.1 բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.53%	5%
Ն 4.2 բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	1.07%	50%

Բանկի շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը


2004թ.-ին 2003թ.-ի նկատմամբ տոկոսային ծախսերի 29.9% աճի պարագայում 18%-ով աճեցին տոկոսային եկամուտները՝ հիմնականում վարկային ներդրումների հաշվին, 37.4%-ով աճեցին ոչ տոկոսային եկամուտները՝ ոչ տոկոսային ծախսերի 31.5% աճի պայմաններում: Արդյունքում շահույթը մինչև հարկումը աճեց 3.38 անգամ և կազմեց 2078.8 մլն դրամ, իսկ շահույթն առանց գուտ մասսհանումների աճեց 1.19 անգամ և կազմեց 1834.9 մլն դրամ:



Նախորդ տարվա նկատմամբ՝

- տոկոսային եկամուտներն աճեցին 376 մլն դրամով կամ 18%-ով, հիմնականում վարկերից ստացված տոկոսների՝ 500 մլն դրամով կամ 28.9%-ով աճի հաշվին:
- տոկոսային ծախսերը աճեցին 199.4 մլն դրամով կամ 29.9%-ով, ընդ որում, հիմնականում աճեցին թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսները 30.5 մլն դրամով կամ 17 անգամ, Գերմանահայկական հիմնադրամի ծրագրով ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց տոկոսները 41.9 մլն դրամով կամ 76.5%-ով, առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դրմաց վճարված տոկոսները՝ 19.7 մլն դրամով կամ 12.1%-ով, ժամկետային ավանդների գծով տոկոսները 94.5 մլն դրամով կամ 30.8%-ով:

- ոչ տոկոսային եկամուտները աճեցին 496 մլն դրամով կամ 37.4%-ով: Ընդ որում ստացված զուտ կոմիսիոն գումարները կազմեցին 700.7 մլն դրամ, աճելով նախորդ տարվա համեմատ 80 մլն դրամով կամ 12.9%-ով, ֆակտորինգից ստացված զուտ եկամուտները աճեցին 54.8 մլն դրամով և կազմեցին 104.3 մլն դրամ, արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներն աճեցին 56.7 մլն դրամով կամ 45.2%-ով, առևտրային



նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներն աճեցին 107.3 մլն դրամով կամ 1.5 անգամ և կազմեցին՝ 178.7 մլն դրամ, արտարժույթային գործառնություններից ստացված զուտ եկամուտը կազմեց 285.6 մլն դրամ,

- ոչ տոկոսային ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 381.7 մլն դրամով կամ 36.1%-ով, հիմնականում վարչական ծախսերի (մասնաճյուղային ցանցի ընդլայնման, նոր վարձատրման համակարգի անցման) հաշվին:

Զուտ տոկոսային եկամուտները աճեցին 176.7 մլն դրամով կամ 12.4%-ով և կազմեցին 1605.5 մլն դրամ: Հատկանշական է, որ զուտ ոչ տոկոսային եկամուտները դրական էին և կազմեցին 229.5 մլն դրամ, ինչը բացառիկ դեպքերից է ՀՀ բանկային համակարգում (աճը կազմեց 113.9 մլն դրամ կամ 98.6%):

2004թ. զուտ մասհանումները կազմեցին 244 մլն դրամի եկամուտ, 2003թ.-ի 930 մլն դրամի ծախսերի դիմաց:

2004թ.-ին շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմեց 5.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) կազմեց 127.6%:

Ֆինանսական արդյունքներ (հազ. դրամ)

Անվանումը	2004թ.	2003թ.
Տոկոսային եկամուտ	2470679	2 094 574
<i>այդ թվում՝ վարկային ներդրումներից</i>	2 229 085	1728 928
<i>պետական արժեթղթերից</i>	132543	253 133
Տոկոսային ծախս	865 165	665 795
Զուտ տոկոսային եկամուտ	1 605 514	1 428 779
Ոչ տոկոսային եկամուտ	1 819 832	1 324 206
<i>այդ թվում՝ միջնորդավճարներից</i>	875 722	887 621
<i>Ֆակտորինգից</i>	104 356	49 587
<i>արժեթղթերի վաճառքից, վերագնահատումից</i>	360 808	196 848
Ոչ տոկոսային ծախս	1 590 355	1 208 667
<i>այդ թվում՝ վարչական ծախսեր</i>	1 408 231	915 561

<i>այդ թվում, աշխատավարձ</i>	<i>551 405</i>	<i>295 459</i>
Չուտ ոչ տոկոսային եկամուտ	229 477	115 539
Չուտ մասհանումներ պահուստներին	-243777	929 555
Շահույթ (վնաս) առանց զուտ մասհանումների	1 834 989	1 544 318
Շահույթ (վնաս)	2 078 766	614 763

Մարքեթինգային, գովազդային քաղաքականություն, ակցիաներ

Տիրապետելով բավարար և նվազ ծախսատար ռեսուրսային բազայի, մարքեթինգային ստրատեգիայի տեսակետից 2004թ. Բանկը հիմնականում գործեց հիմնվելով Բանկի ստրատեգիական առավելությունների և շուկայի տարողության համադրության հիման վրա, միաժամանակ հաշվի առնելով իրացման շուկաների զարգացման բնույթը և բանկային ռիսկերը, որոշ դեպքերում հրաժարվելով նախանշված ուղղություններից: Անցած տարի Բանկի կողմից տարվող մարքեթինգային քաղաքականությունն ուղղված էր բանկային ծառայությունների սպառման համալիր համակարգի միջոցով Բանկի վարկանիշի ամրապնդմանը, հեղինակության բարձրացմանը, զարգացման նոր հնարավորությունների ստեղծմանը, այդ թվում նաև՝ բանկային ծառայությունների և ապրանքների տեսականու ընդլայնմանը, որակի բարելավմանը, հաճախորդների խմբերի բացահայտմանը, մրցակիցների ուսումնասիրմանը, Բանկի գովազդի կազմակերպմանը, հրապարակայնության ապահովմանը: Բանկի կողմից որդեգրված մարքեթինգային քաղաքականության հիմնական ուղղություններն ի կատար ածելու համար իրականացվեցին մի շարք մարքեթինգային հետազոտություններ, միջոցառումներ և ակցիաներ, այդ թվում Բանկի 10-ամյա տարեդարձի կապակցությամբ:

2004թ. շուկայի հետազոտությունները ընդգրկեցին ապառիկով կենցաղային տեխնիկայի և կահույքի, բջջային հեռախոսների ձեռք բերման ֆինանսավորման, արագ փոխանցումների համակարգերի, ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով, հիփոթեքային, փոքր և միջին բիզնեսի, ուսանողական, ոսկու գրավով վարկերի, շուկաների, այլ բանկերի սակագնային և տոկոսադրույքների քաղաքականությունների, Բանկի ոչ հաշվետեր հաճախորդների բազայի և այլ բնագավառների ուսումնասիրությունները և վերլուծությունը, տարատեսակ հարցումները, Բանկի մասնաճյուղերում պահանջարկի բացահայտումը:

Բանկի ճանաչվածության բարձրացման նպատակով 2004թ. կազմակերպվեցին «Կոնվերս IQ-Կոնվերս 10» մրցույթ-վիկտորինան, «Համայնքների զարգացման լավագույն ծրագիր» մրցույթը, «Բանկի լավագույն հաճախորդներ» մրցույթը, տնտեսագիտական ԲՈՒՀ-երի լավագույն ուսանող-ուսանողուհի մրցույթը, Չարենցավան քաղաքի և Երևանի Ավան համայնքի թվով 22 ծնողազուրկ երեխաներին դրամական օգնություն, բազմաթիվ մամուլի ասուլիսներ, ռեպորտաժներ, «Չատիկ» մանկատանը և «Օլիմպոս» կրթահամալիրին տրամադրվեցին համակարգիչներ, Ֆրանսիական մամուլում հրապարակվեց Բանկի մասին հոդվածը, նկարահանվեց և ցուցադրվեց Բանկի մասին ֆիլմը, հիմնավոր կատարելագործվեց Բանկի ինտերնետային կայքը, 10-ամյակի կապակցությամբ կազմակերպվեց ծառայությունների անվճար միամսյակ, լազերային շոու և երեկույթ:

Ընդհանուր առմամբ 2004թ.-ին Բանկի գովազդային քաղաքականությունը ուղղված էր թե՛ Բանկի իմիջի, և թե՛ ծառայությունների ինտենսիվ խթանմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

2004թ. արդիականացվեց մասնաճյուղային համակարգչային ցանցը, բարձրացվեց կապի արագագործությունը, որակը և հուսալիությունը, նախատեսվեցին ռեզերվային միացման

տարբերակները, VPN տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովվեց ցանցի անհրաժեշտ անվտանգության մակարդակը: 2004թ. ներդրվեց Active Directory կենտրոնացված ցանցային գրանցման և իրավասությունների տրամադրման համակարգը, Բանկի ներքին համակարգչային ցանցով կազմակերպվեց մասնաճյուղերի ենթացանցերի և համակարգերի կենտրոնացված արմինիստրավորումը և մոնիտորինգը, հակավիրուսային կենտրոնացված պաշտպանությունը, մասնաճյուղերից ձայնի (IPPhone) և պատկերի տեղափոխման (IPCamera) համակարգերը, Բանկի (ներառյալ մասնաճյուղերի) ներքին կենտրոնացված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը (Microsoft Outlook), գլխավոր գրասենյակում, մասնաճյուղերում ներդրվել են «Գործառնական օր» համակարգի տաք պահուստային սերվերները, գլխավոր գրասենյակում ներդրվել է հեռախոսագանգերի հաշվառման և դեկավարման համակարգը, արտաքին IP հեռախոսակապը, իրականացվել է անցում SWIFTNet համակարգին, ներդրվել է WESTERN UNION համակարգը, Lotus Domino համակարգում ստեղծվել է MIGOM և WESTERN UNION փոխանցումների ներքին ուղղորդման ծրագրային ենթահամակարգ, ներդրվել է ՀՀ ԿԲ էլեկտրոնային ստորագրության «Արաքս-ԿԲ» համալիրը, ընթացք ստացավ արխիվացման և ռեզերվային կրկնօրինակման միասնական համակարգի ներդրումը, Բանկը ստացավ VISA Int-ից և տեղադրեց արբանյակային կայան, որի օգտագործումը թույլ տվեց բարելավել VISA համակարգի հետ կապի որակը:

Ծրագրային համակարգերից մշակվեցին, արդիականացվեցին և ներդրվեցին բոլոր նոր և գործող ծառայությունները սպասարկող և հաշվառման ծրագրային համակարգերը, այլ ներքին հաշվառումները ապահովող ենթահամակարգերը, այդ թվում դեբիտորական պարտքերի, արխիվային փաստաթղթերի, կադրերի հաշվառման մոդուլները:

2004թ. հետազոտվեց բանկային ավտոմատացված սպասարկման միջազգային ստանդարտների համակարգերի շուկան, նախադրյալներ ստեղծվեցին նոր ծրագրային համակարգի ընտրության համար:

Կապիտալ ներդրումներ

2004թ. Բանկի կապիտալ ներդրումները կազմել են 503 մլն դրամ:

2004թ. ընթացք ստացավ գլխամասային գրասենյակի նոր մասնաշենքի (ներառյալ դեպոզիտարիայի, դրամապահոցի և արխիվի կառույցների) կապիտալ շինարարության գործընթացը, որի գծով 2004թ. կատարվեց 203.2 մլն դրամի ներդրում:

Ինչպես և նախորդ տարիներին, 2004թ. Բանկը արդիականացրեց իր համակարգչային պարկը՝ համակարգիչներ, սերվերներ և տպիչներ, ձեռք բերեց 3 նոր բանկոմատ և պոստերմինալներ: Այս ներդրումների մեծությունը կազմեց 146.3 մլն դրամ:

Հաշվետու տարում նաև ձեռքբերվեցին 5 ավտոմեքենա, որոնց գծով ներդրումները կազմեցին 33 մլն դրամ, գույք և այլ հիմնական միջոցներ 120.5 մլն դրամի:

Կորպորատիվ կառավարման համակարգ

2004թ. կարելի է բնութագրել որպես Բանկի կառավարման համակարգի ինտենսիվ կատարելագործման ժամանակաշրջան: Գրեթե ամբողջությամբ վերանայվեցին գործունեությունը կանոնակարգող կազմակերպական և գործառնական գործող ակտերը, մշակվեցին մի շարք նոր՝ կառավարման բարելավմանը, ռիսկերի հսկողության ուժեղացմանը և նվազեցմանը, նոր բիզնես գործընթացների և ծառայությունների իրականացման կարգավորմանը ուղղված կարգեր, ընթացակարգեր: 2004թ. Բանկը գործեց տարվա համար մշակված հստակ միջոցառումների ծրագրով, որը տարվա ընթացքում ճշգրտումներ ստացավ:

Մասնաճյուղային ցանցի ընդլայնման, սպասարկման ծավալների ավելացման հետևանքով, Բանկի որոշումների ընդունման աստիճանական ապակենտրոնացման 2003թ. որդեգրած մոդելը 2004թ. վերահաստատեց իր անհրաժեշտությունը ու արդյունավետությունը: Որոշումների մի մասն ընդունվում է բացարձակապես բարձր ղեկավարության կողմից գործող հանձնաժողովների և ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա, մյուս մասը՝ հիերարխիկ սահմանափակումների ներքո (ըստ պաշտոնների և լիմիտների) և մշտապես գործող հանձնաժողովների կողմից: Գործող հանձնաժողովներն էին՝ Վարկային կոմիտեն, Փոքր և միջին բիզնեսի վարկավորման կոմիտեները, Ակտիվների և պասիվների կառավարման, Մասնագիտական որակավորման հանձնաժողովները:

2004թ. Բանկում իրականացվեցին կառավարման բարելավմանը, հաշվառման հուսալիության բարձրացմանն ուղղված կազմակերպական կառուցվածքի բարելավումներ: Այսպես, ստեղծվեցին մի շարք նոր ստորաբաժանումներ՝ Օժանդակող գրասենյակը (Back Office), Հաշվարկային կենտրոնը, Մեթոդոլոգիայի և հաշվեկշռի ամփոփման բաժինը: 2004թ. մշակվեցին նորաստեղծ և լրամշակվեցին գործող ստորաբաժանումների գործառնության կանոնակարգերը, հաստատվեցին մի շարք ստորաբաժանումների զարգացման հայեցակարգերը:

2004թ. մշակվեց ստորաբաժանումների գործունեության, բանկային պրոդուկտների ինքնարժեքի հաշվառման և հաշվարկման համակարգը (կարգը) և կատարվեցին առաջին հաշվարկները, մշակվեցին և ներդրվեցին աշխատատեղերի նկատմամբ ունիֆիկացված, ստանդարտացված պահանջների սահմանման և գնահատման, վարձատրության և մասնագիտական որակավորման նոր համակարգերը (կարգերը), կատարելագործվեց ներքին հսկողական համակարգը՝ ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան լրամշակվեցին ներքին մի շարք ակտեր, մշակվեցին և ներդրվեցին ներքին նորմատիվների, ֆինանսական տեղեկատվական (ներառում է Բանկի գործունեության, արտաքին միջավայրի, մրցակցային դիրքի, բանկային համակարգի քանակական և որակական ֆինանսական ցուցանիշների ընթացիկ վիճակը և նախապատմությունը) համակարգերը, լրամշակվեց մասնաճյուղերի ռեյտինգավորման և գնահատման համակարգը, որը խթանում է ներքին մրցակցությունը մասնաճյուղերի միջև:

2004թ. մշակվեցին և հաստատվեցին Բանկի «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը», «Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը», ISO17799 ստանդարտին համապատասխանող «Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության քաղաքականությունը» և մշակման ընթացք ստացավ Բանկի անընդհատության գործընթացը կարգավորող քաղաքականությունը:

Ներքին հսկողության համակարգ

2004թ. Բանկը շարունակեց ներքին հսկողական համակարգի կատարելագործումը՝ իրականացվեցին մի շարք միջոցառումներ ուղղված գործառնական ռիսկերի նվազեցմանը, հատակեցվեցին հետագա անելիքները, ավարտուն և ամբողջական հսկողական համակարգ ապահովելու համար, այդ թվում ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան: Բանկում կազմակերպված գործունեության ոլորտների հսկողական, ռիսկերի նվազեցման համակարգը ստացավ իր տրամաբանական զարգացումը: Ընթացիկ տարում՝

ա/ լրամշակվեցին գործավարական (որոշումների, հրամանների, կարգադրությունների կատարման և հսկման), փաստաթղթաշրջանառության, ներքին կարգապահական կարգերը, բ/ վերամշակվեց հաշվետվությունների ներկայացման, հսկման, ստուգման ներքին կարգը,

զ/ Բանկի գործառնական հսկողական համակարգը լիարժեքորեն կազմակերպելու նպատակով ստեծվեցին նոր ստորաբաժանումներ՝ Մեթոդոլոգիայի և հաշվեկշռի ամփոփման բաժինը, Օժանդակող գրասենյակը (Back Office), Հաշվարկային կենտրոնը,
դ/ վերանայվեցին բանկային սպասարկման ավտոմատացված համակարգում աշխատակիցների իրավասությունները և սահմանվեցին նորովի,
ե/ Բանկը անցավ «մեկ սերվերի» կենտրոնացված տեխնոլոգիային,
զ/ գլխավոր գրասենյակում կենտրոնացվեց միասնական սերվերով աշխատող մասնաճյուղերի ներքին հաշվապահության վարման գործընթացը,
է/ ներդրվեցին ներքին նորմատիվների և ամբողջական տեղեկատվական համակարգերը,
ը/ VISA Int.-ի կողմից Բանկում անց է կացվել RISK REVIEW, որը ուղղված էր քարտային ծրագրերի իրականացման հետ կապված գործառնական ռիսկերի նվազեցմանը:

Կադրային քաղաքականություն

2004թ. Բանկի կողմից վարած կադրային քաղաքականությունը բերեց անձնակազմի մասնագիտական որակի, կարգապահության բարձրացմանը, կադրերի արտահոսքի նվազեցմանը, աշխատակիցների համար բարենպաստ ապագայի ակնկալիքների ձևավորմանը: Բանկի անձնակազմը 31.12.04թ. կազմեց 303 մարդ (աճեց 117-ով կամ 62.9%-ով), ընդ որում բարձրագույն կրթություն ունեցող անձնակազմի քանակը կազմեց 253, այդ թվում՝ մասնագիտական գիտական աստիճանով՝ 1, և մասնագիտական կրթությունով՝ 141: Անձնակազմի ավելացումը պայմանավորվեց 7 նոր մասնաճյուղերի, գլխամասային գրասենյակի նոր ստորաբաժանումների հաշվին: 2004թ. ընթացքում Բանկի աշխատակիցների վերապատրաստման թիվը կազմեց 25, որից արտերկրներում՝ 6: Բանկում կազմակերպվեցին որակավորման բարձրացման պարբերական սեմինարներ Բանկի ներքին կարգերի, ընթացակարգերի, համակարգերի ուսուցման նպատակով: 2004թ. ընթացքում մրցութային կարգով Բանկի անձնակազմում ընդգրկվեցին բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող, հեռանկարային մասնագետներ: Ինչպես և յուրաքանչյուր տարի, 2004թ. անցկացվեց մասնագիտական որակավորման գնահատում:

2004թ. վերջնականապես ունիֆիկացվեցին և սահմանվեցին աշխատատեղերի նկատմամբ պահանջները: Աշխատատեղերը գնահատվեցին պահանջների, չափանիշների բալային հստակ համակարգով, և 2004թ.-ին հիմք հանդիսացան Գլխամասային գրասենյակի և մեկ մասնաճյուղի նոր վարձատրության դրույքաչափերի սահմանման համար: Նշենք, որ մասնագիտական որակավորման գնահատումը ուղղակիորեն կապված է վարձատրման նոր համակարգի հետ և ատեստավորման արդյունքներն ուղղակիորեն անդրադառնում են աշխատակիցների վարձատրության վրա:

2004թ. հիմնադրվել է «Կոնվերս Բանկի Ուսումնական Կենտրոն» ՍՊԸ-ն, որը կազմակերպում է եռամսյակային ուսումնական դասընթացներ, որոնք իրենց բովանդակությամբ և կառուցվածքով նախատեսված են բանկային գործունեության մասին մասնագիտական գիտելիքներ ուսուցանելու համար: 2004թ. Բանկի աշխատակիցների մոտ 5%-ը վերապատրաստվել է «Կոնվերս Բանկի Ուսումնական Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից: Բանկում աշխատակիցների համար կազմակերպվել է 22 ներբանկային սեմինարներ, իսկ Բանկի 25 աշխատակիցներ մասնակցել են թվով 23 այլ սեմինարների, որոնցից 6-ը՝ արտերկրում:

Տարածքային ստորաբաժանումների տեղաբաշխումը

2004-2006թթ. ծրագրված էր 12-15 մասնաճյուղից կազմված մասնաճյուղային ցանցի ձևավորում, ավելացնելով ևս 6-9 մասնաճյուղ: Ներկայումս Բանկի 13 մասնաճյուղերից

բաղկացած ցանցը ընդգրկում է ՀՀ 10 քաղաքները՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Նոր Հանրեն, Արտաշատ, Սևան, Արմավիր, Սեծամոր, Հրազդան, Չարենցավան: Կարևորելով մասնաճյուղային ցանցի ընդլայնման խնդիրը, Բանկը 2004թ. պլանավորել էր ընդլայնել այն և նախագծեց իր հեռանկարային մասնաճյուղային ցանցը: 2004թ. ստեղծվեց 7 նոր մասնաճյուղ: 2004թ. իրականացվեցին հետազոտական մարքեթինգային, նախապատրաստական այլ աշխատանքներ, ընտրվեցին նպատակային տարածաշրջանները, մշակվեցին նոր մասնաճյուղերի ստեղծման և գործունեության տնտեսական ծրագրերը: 2004թ. գործարկվեցին Ավան, Արտաշատ, Սևան, Արմավիր, Սեծամոր, Հրազդան և Չարենցավան մասնաճյուղերը: Նշենք նաև, որ 2004թ. ք. Մոսկվայում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ լիազորեց իր ներկայացուցչին ոչ ռեզիդենտ հաճախորդների ներգրավման նպատակով, ինչը տվեց իր դրական արդյունքը:

ԲԱՆԿԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Բանկի առաքելության, բաժնետերերի դիրքորոշման և շուկայում ներկայիս դիրքի ներքո, Բանկի 2005թ. նպատակներ կհանդիսանան՝

1. ՀՀ բանկային համակարգում լիդերության պահպանումը՝ ակտիվների, ընդհանուր կապիտալի մեծությամբ ՀՀ բանկային համակարգում առաջին եռյակում տեղ զբաղեցնելը, հաճախորդների լայնազանգված կազմին (բոլոր ծառայություններից օգտվող 70-80 հազար հաճախորդների կազմ) բազմաբնույթ և որակյալ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի լիդերության նպատակը չի փոփոխվել, իսկ ակտիվների, ընդհանուր կապիտալի ցուցանիշներն ինքնանպատակ չեն, այլ արտացոլում են Բանկի ծրագրված գործունեության հավաքական արդյունքը բանկային բնագավառի զարգացման, Բանկի դիրքի ամրապնդման ներքո: 2005թ. ծրագրված է հաճախորդների քանակի 57.3%, ակտիվների 12.9%, ընդհանուր կապիտալի՝ 17.4% աճ (շահույթների հաշվին):

2. Դիվերսիֆիկացված, ցածր ռիսկային, աճող վարկային պորտֆել ունենալը՝ վարկերի հնարավոր կորուստների պահուստներ հարաբերված վարկային ներդրումների ցուցանիշը պետք է կազմի ոչ ավելի, քան 2.0%, այդ թվում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՀԲ, ԳՀՀ, USAID) վարկավորման ծրագրերով:

Շեշտադրումը վարկավորման մատնանշված քաղաքականությանը չի փոխվել և պայմանավորված է նախկին փորձով՝ մինչև 2004թ. առկա վարկային կորուստներով, ինչպես նաև նոր, գրավիչ շուկաների ի հայտ գալով՝ սպառողական վարկերի շուկա, հիփոթեքային, փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված վարկավորում: Ռիսկի նպատակային մակարդակը էլ ավելի է նվազեցվել (2.5%-ից 2.0%): Նպատակին էապես կաջակցի միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՀԲ, ԳՀՀ, USAID) հետ վարկավորման ծրագրերով համագործակցության շարունակումը՝ միջնաժամկետից երկարաժամկետ և էժան ռեսուրսներին տիրապետելու անփոփոխ նպատակով:

3. Նվազ ծախսատարությամբ ռեսուրսային բազայի ապահովումը, այդ թվում՝ որպես էական գործոն, ոչ ռեզիդենտ հաճախորդների կազմի (մոտ 1000-1200), նրանցից ներգրավված միջոցների (5-6 մլրդ դրամ), գործառնությունների ծավալների մակարդակի պահպանումը (եկամուտների 600մլն դրամի մակարդակ):

Ոչ ռեզիդենտ հաճախորդների բազան Բանկի կայուն և էժան ռեսուրսների, եկամուտների էական բաղադրիչներից է, ուստի այս հատվածի պահպանումը ռազմավարական նշանակություն ունի և Բանկի համար ՀՀ այլ բանկերի նկատմամբ որպես առավելություն է դիտարկվում: Նպատակը չի փոխվել, չնայած նրան, որ ակնկալվում է այս հաճախորդների ակտիվության նվազում:

4. Լինել ներկայացված ՀՀ տնտեսապես ակտիվ տարածաշրջաններում, մասնավորապես, խոշոր մարզկենտրոններում, ինչը ենթադրում է 15-18 մասնաճյուղից կազմված մասնաճյուղային ցանցի ձևավորում:

Մասնաճյուղային ցանցի ընդլայնումը դեռևս 2004թ. ծրագրված նպատակներից է և զարգացման տրամաբանական սցենար է արդեն իսկ ՀՀ-ում և նրանից դուրս ճանաչում ունեցած բանկի համար և ծառայությունների շրջանակի ընդլայնման միջոցառումների հետ միասին ուղղված կլինի հաճախորդների բազայի ընդլայնմանը, բանկերի հետ մրցակցության դիմակայմանը և ծրագրված ցուցանիշների ապահովմանը: Նախորդ տարի ծրագրավորված 12-15 մասնաճյուղից բաղկացած նպատակային ցանցը կընդլայնվի մինչև 15-18՝ պայմանավորված առկա գրավիչ շրջաններով:

5. Շարունակապես ընդլայնել ծառայությունների շրջանակը և բարձրացնել սպասարկման որակը, ներդնելով ժամանակակից բանկային ծառայություններ (5-10 նոր ծառայություն) և սպասարկման տեխնոլոգիաներ (շեշտը դնելով ստանդարտացված մանրածախ հոսքային, անհատական և հեռակառավարման համակարգերով մատուցվող ծառայություններին), միջնաժամկետ մարքեթինգային քաղաքականությունը ուղղել ծառայությունների վաճառքի ինտենսիվ խթանմանը: Համարելով պլաստիկ քարտերի բիզնեսը Բանկի համար առանցքային բաղադրիչ, անփոփոխ նպատակ է պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալների բարձր աճի տեմպերի պահպանումը (քարտերի քանակի, սպասարկման կետերի առնվազն տարեկան 25-30% աճ):

Ծառայությունների շրջանակի ընդլայնումը և սպասարկման որակի բարձրացումը նույնպես շարունակական նպատակ է և բխում է Բանկի ֆինանսական ցուցանիշների դրված նպատակներից և հաճախորդների օրեցօր աճող պահանջներից: Ի տարբերություն 2004թ. մարքեթինգային քաղաքականության ընդհանուր իմիջային բաղադրիչին շեշտադրելուն, որն ըստ Բանկի հարցումների բարելավվել է, 2005թ.-ից մարքեթինգային քաղաքականությունը ուղղված կլինի ծառայությունների վաճառքի ինտենսիվ խթանմանը:

Ծառայությունների մատուցման խնդիրներից են հանդիսանում.

- 5-10 նոր ծառայությունների ներդրումը, այդ թվում՝

-անհատական մենեջերների ինստիտուտի ներդրումը՝ 3-5 անհատական մենեջերների պատրաստումը, սպասարկման գործընթացի և պայմանների սահմանումը, 2005թ. 20-25 խոշոր հաճախորդների ներգրավումը,

-անհատական պահարանների ծառայության ներդրումը գլխամասային գրասենյակում,

-անշարժ և շարժական գույքի առք ու վաճառքի գործարքի ապահովման միջնորդային ծառայության (ակրեդիտիվի) ներդրումը,

-DISCOUNT զեղչային քարտային համակարգի ստեղծումը,

-նոր տեսակի «Ապահովված», «Արձակուրդային», «Աշնանային», «Ամանորյա» ավանդների ընդունումը,

-ուսանողների ուսման վարձերը վճարելու, անշարժ գույքի կառուցման և վերանորոգման վարկերի տրամադրումը,

-չիպային քարտերի սպասարկման նպատակով սերտիֆիկացիա և սպասարկում,

- գործող ծառայությունների զարգացումը և կատարելագործումը՝

- 2004թ.-ին ստեղծված ֆիզիկական անձանց անունով առանց հաշվի բացման արագ փոխանցումների սեփական «Converse-Transfer» համակարգի մրցունակության բարձրացումը՝ համակարգի աշխարհագրության ընդլայնումը և 2005թ. համակարգով ֆիզիկական անձանց փոխանցումների ծավալի տարեկան ավելացումը առնվազն 30%-ով,

- տրամադրված պլաստիկ քարտերի քանակի ավելացումը. 2005թ.-ին ծրագրված է աճ 65.3%-ով, որի շնորհիվ դրանց քանակը կկազմի 14431 հատ, , 2005թ.-ին 7 նոր բանկոմատների, 30 նոր պոս-տերմինալների տեղադրումը, այդ թվում ՀՀ շրջաններում և ՌԴ-ում:Պլաստիկ քարտերի

ծառայությունները ժամանակակից բանկի անբաժանելի ատրիբուտ են, Բանկը 2002-2003թթ. իրականացրել է բավականաչափ ներդրումներ այս բնագավառում, 2004թ. արձանագրել է բնագավառի էական զարգացում և Բանկի տեսակետից, հաճախորդների բազայի հետագա ընդլայնման արդյունավետ գործիք են հանդիսանում:

- կոմունալ վճարումների համակարգի լրամշակումը և ծավալների ընդլայնումը մոտ 4.6 անգամ, այդ թվում հայտերի հիման վրա ավտոմատ գանձման պարբերական հանձնարականների, բանկոմատներում պլաստիկ քարտերի միջոցով,

6. Բանկի գլխամասի և մասնաճյուղերի միջև online կապի, բանկային ավտոմատացված սպասարկման համակարգի «մեկ սերվերի» տեխնոլոգիայի, ամբողջական անցումը կորպորատիվ համակարգչային ցանցի կենտրոնացված կառավարման մոդելներին, բանկի գործունեության անընդհատության ապահովման ամբողջական համակարգի գործարկումը և պահուստային համակարգչային կենտրոնի կառուցումը, բանկային ավտոմատացված սպասարկման ծրագրային համակարգի արդիականացումը:

Online կապի, «մեկ սերվերի» տեխնոլոգիայի կիրառման նպատակն է հսկողության ուժեղացումը, աշխատանքի արդյունավետության բարձրացումը, աղմինիստրատիվ ծախսերի տնտեսումը (գործուղման, աշխատավարձի, ծրագրային համակարգի սպասարկման ծախսերի), հաճախորդների համար սպասարկման հարմարավետությունը: Նշված տեխնոլոգիային անցնելու նպատակը չի փոփոխվել և գործընթացը կավարտվի 2005թ.: Բանկային ավտոմատացված սպասարկման ծրագրային համակարգի արդիականացման նպատակը բխում է Բանկի անընդհատ աճող գործառնական ծավալներից, հաճախորդների բազայի և ծառայությունների շրջանակի ընդլայնման նախանշված նպատակներից:

7. Ունենալ նվազ ռիսկերով արդյունավետ կառավարման համակարգ՝ միջավայրի փոփոխություններին ճկուն ադապտացվող կազմակերպական, տեխնիկապես հագեցված համակարգ, ներդրված ամբողջական ներքին հսկողական համակարգ, բարձր արտադրողականությամբ գործունյա և հմուտ անձնակազմ:

Նվազ ռիսկերով արդյունավետ կառավարման համակարգ ունենալու նպատակը Բանկի առաքելության և նպատակների իրականացման երաշխիքն է: Կառավարման համակարգի անընդհատ կատարելագործումը մշտական նպատակ է Բանկի համար և ուղղված է համակարգի արդյունավետության բարձրացմանը, ռիսկերի նվազեցմանը, օրեցօր աճող պահանջների ապահովմանը: 2005թ.-ին կառավարման համակարգի խնդիրներ կհանդիսանան՝

- ներքին հսկողական համակարգի համապատասխանեցումը ՀՀ ԿԲ պահանջներին,
- աշխատատեղերի նկատմամբ պահանջների ունիֆիկացման և ստանդարտացման, աշխատակազմի վարձատրության համակարգի ճշգրտումը և ներդրումը Բանկի մասնաճյուղերում, մասնագիտական որակավորման համակարգի վերանայումը և կիրառումը,
- ստորաբաժանումների ու բանկային պրոդուկտների ինքնարժեքի հաշվառման և հաշվարկի համակարգի վերջնական ներդրումը, դրա շաղկապումը խրախուսման համակարգին:
- անձնակազմի որակավորման բարձրացման շարունակական գործընթացի ապահովումը՝ անձնակազմի 15-20%-ի վերապատրաստումը, ուսուցումը,
- մասնաճյուղային ցանցի կառավարման մոդելի ճշգրտումը, մասնաճյուղերի գործունեության ռեյտինգավորման մոդելի վերամշակումը,
- տեղեկատվական համակարգի ներդրումը Բանկի կորպորատիվ համակարգչային ցանցում,
- գլխամասային գրասենյակի չնորոգված տարածքի շինարարության ավարտը և գործարկումը:

Ելնելով վերը նշված նպատակներից, Բանկը կանխատեսում է պլանավորվող ժամանակաշրջանում պահպանել իր առաջատար դիրքերը ՀՀ բանկային համակարգում՝ համակարգի զարգացման տեմպերի նկատմամբ առաջանցիկ աճի տեմպերի ապահովման շնորհիվ:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերը

1. Մոդալալ Խուրի
2. Սմբատ Նասիբյան
3. 'HUDSOTRADE' LTD

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի վարչության անդամները

1. Գլխավոր տնօրեն՝ Սմբատ Նասիբյան
2. Գլխավոր տնօրենի տեղակալ - ֆինանսական գլխավոր վարչության պետ՝ Արտակ Հանեսյան
3. Հաշվապահական հաշվառման վարչության պետ - Գլխավոր հաշվապահ՝ Արշակ Կարախանյան

Ինչպե՞ս մեզ գտնել

«Կոնվերս բանկ» ՓԲԸ, գլխամասային գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 375010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ: (374 1) 54 54 52, 56 92 48, 56 92 68
Ֆաքս: (374 1) 54 09 20
E-mail: post@conversebank.am, post@conversebank.com
post@conversebank.org, post@conversebank.net
URL: <http://conversebank.am>, <http://conversebank.com>,
<http://conversebank.org>, <http://conversebank.net>

«Կենտրոնական» մասնաճյուղ

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49
Հեռ. (374 1) 281015
Ֆաքս: (374 1) 230996

«Նոր Հաճրն» մասնաճյուղ

ՀՀ, ք. Նոր Հաճրն, Չարենցի 8
Հեռ. (374 24) 43830, (374 24) 43840
Ֆաքս: (374 24) 43810

«Գյումրի» մասնաճյուղ

ՀՀ, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 4բ
Հեռ: (374 41) 42095, 42867
Ֆաքս: (374 41) 41794

«Վանաձոր» մասնաճյուղ

ՀՀ, ք. Վանաձոր, Խորենացու 1գ
Հեռ: (374 51) 42912
Ֆաքս: (374 51) 42916

«Արտաշատ մասնաճյուղ

ՀՀ, ք.Արտաշատ, Խառագյան 1
Հեռ: (374 35) 21344
(374 35) 22478

«Մեծամոր» մասնաճյուղ

ՀՀ ք. Մեծամոր "ՀԱԷԿ"-ի հյուրանոցի շենք,
Հեռ 1: (374 37) 32070
281833

«Արմավիր» մասնաճյուղ

ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան 22 ա,
Հեռ : (374 37) 62273,
281433

«Չարենցավան» մասնաճյուղ

ՀՀ, ք. Չարենցավան, Քոչարի փ., շենք 8.,
Հեռ: (374 26) 41597

«Հրազդան» մասնաճյուղ

ՀՀ, ք. Հրազդան, Սիկրոշրջան Դ/1,
Հեռ: (374 23) 34709

«Մեան» մասնաճյուղ

ՀՀ, ք. Մեան, Նաիրյան 155,
Հեռ: (374 61) 25452

«Ավան» մասնաճյուղ

ՀՀ, ք. Երևան Հ. Հովհաննիսյան ք., «Ավան» ունիվերսամ,
Հեռ: (374 1) 614472

«Զվարթնոց» Սահմանափակ գործառնություններ իրականացնող մասնաճյուղ

ք. Երևան, Զվարթնոց մ/օ 42
Հեռախոս՝ 59 3513

«Ավիացիա» Սահմանափակ գործառնություններ իրականացնող մասնաճյուղ

ք. Երևան, Զվարթնոց մ/օ 42
Հեռախոս՝ 59 35 96

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը

